



ԿԵՆՍԱԹՈՇՆԱԿԱՅԻՆ
ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐ



բարեկեցիկ
աղազան
մեղրումներ է
դահանջում այսօր



ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ

բազմաստիճան կենսաթոշակային

համակարգի վերաբերյալ

www.114gov.am



114 հարց ու պատասխան

**Հայաստանի Հանրապետության
բազմաստիճան կենսաթոշակային
համակարգի վերաբերյալ**

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ	4
ԿԵՆՍԱԹՈՇՆԱԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	6
ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ	17
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	23
ՈՐՏԵ՞Ղ ԵՆ ԿՈՒՏԱԿՎԵԼՈՒ ՄԵՐ ՄԻՋՈՑՆԵՐԸ	37
Ո՞Վ Է ԿԱՌԱՎԱՐԵԼՈՒ ՄԵՐ ՄԻՋՈՑՆԵՐԸ	42
ԿԵՆՍԱԹՈՇՆԱԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	55
ՄԻՆՉԵՎ 63 ՏԱՐԵԿԱՆ ԼՐԱՆԱԼԸ ԿԱՄ ԴՐԱՆԻՑ ՀԵՏՈ ԱՌԱՆՁԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇՆԱԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	65
ՈՐՏԵ՞Ղ Է ՀԱՎԱՔԱԳՐՎԵԼՈՒ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ	72
ԿԱՄԱՎՈՐ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇՆԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	78

ՆԱԽԱԲԱՆ

Սիրելի՛ հայրենակիցներ,

Այս գրքույկի միջոցով դուք կարող եք գտնել ձեզ հուզող հարցերի պատասխանները ներդրվող կենսաթոշակային բազմաստիճան համակարգի վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իրականացնում է արմատական կենսաթոշակային բարեփոխումներ, որի նպատակն է պատշաճ կենսաթոշակ ապահովել կենսաթոշակառուների համար, կենսաթոշակային համակարգը դարձնել ֆինանսապես կայուն, ապահովել ուղղակի կապ անձի եկամուտների (համակարգին կատարված վճարումների) և կենսաթոշակի չափի միջև:

Հայաստանում ներկայումս գործող բաշխողական կենսաթոշակային համակարգում առկա են մի շարք խնդիրներ, որոնք պայմանավորված են հետևյալ գործոններով. առաջինը՝ բաշխողական կենսաթոշակային համակարգում բացակայում է ուղղակի կապը անձի եկամուտների (համակարգին կատարված վճարումների) և ապագա կենսաթոշակի չափի միջև: Այդ հանգամանքն ապախրախուսում է աշխատողներին ցույց տալ իրենց իրական եկամուտները և կատարել սոցիալական ապահովության վճարներ: Աշխատողները շահագրգռված չեն կենսաթոշակային վճարումներ կատարել համակարգին, որն ի վիճակի չէ ապահովել համարժեք կենսաթոշակ:

Երկրորդը երկրում ստեղծված ժողովրդագրական բարդ իրավիճակն է, որը հետևանք է վերջին քսան տարիների ընթացքում ծնելիության կրճատման և աշխատունակ տարիքի բնակչության միգրացիայի: Արդյունքում մեկ սոցիալական վճարում կատարող ֆինանսավորում է մեկ կենսաթոշակառուի կենսաթոշակի վճարումը, այն դեպքում, երբ Արևմտյան եվրոպայի երկրներում երեք աշխատողը ֆինանսավորում է մեկ կենսաթոշակառուի կենսաթոշակի վճարումը:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ֆինանսապես անկայուն կենսաթոշակային համակարգ ունեցող երկրները խնդիրը փորձում են լուծել հիմնականում հետևյալ երեք անցումային միջոցառումները կիրառելով՝

- անցում սերունդների համերաշխության սկզբունքով ֆինանսավորվող կենսաթոշակային բաշխողական համակարգից դեպի ինքնաֆինանսավորվող կուտակային համակարգի,
- անցում բանաձևերի հիման վրա հաշվարկվող և քաղաքական որոշումներով սահմանվող կենսաթոշակի մոդելից դեպի իրական եկամուտների հիման վրա սահմանված վճարների մոդելի,
- անցում պետության կողմից անմիջապես կառավարվող կենսաթոշակային համակարգից դեպի պետության կողմից կարգավորվող և վերահսկվող մասնավոր կենսաթոշակային համակարգի:

Իրականացվող կենսաթոշակային բարեփոխումների արդյունքում Հայաստանում գործելու է բազմաստիճան կենսաթոշակային համակարգ: Բազմաստիճան կենսաթոշակային համակարգի հայաստանյան մոդելը խարսխված է գործող բաշխողական համակարգի վրա, որն, ըստ էության, լրացվել է երկու նոր՝ կուտակային և կամավոր կենսաթոշակային բաղադրիչներով: Կենսաթոշակային նոր համակարգը կհանգեցնի նոր մտածելակերպի արմատավորմանը՝ քաղաքացուն մասնակից և պատասխանատու դարձնելով սեփական բարեկեցության ապահովման համար:

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Չարդ 1.

Ինչպիսի՞ն էր Չայաստանում կենսաթոշակային համակարգը մինչև բարեփոխումները:

Չայաստանի Չանրապետության կենսաթոշակային ապահովության համակարգը բնութագրվում էր որպես սերունդների համերաշխության սկզբունքով ֆինանսավորվող բաշխողական կենսաթոշակային համակարգ:

Սա նշանակում է, որ կենսաթոշակները ֆինանսավորվում են միայն ՀՀ պետական բյուջեի ընթացիկ եկամուտներից՝ հարկերի կամ սոցիալական վճարների հաշվին: Այսինքն, աշխատող սերունդը ֆինանսավորում է տարեց սերնդի կենսաթոշակները:

Չամակարգն, ըստ էության, իրականացնում է բաշխման գործառույթ. վարձու աշխատողների, գործատուների և անհատ ձեռնարկատերերի կատարած վճարումներն ուղղվում են պետական բյուջե և, օրենքով սահմանված կարգով, տրամադրվում են կենսաթոշակառուներին:

Չայաստանի Չանրապետության կենսաթոշակային համակարգի շրջանակներում վճարվում են աշխատանքային և սոցիալական կենսաթոշակները (հաշվի առնելով կենսաթոշակի էությունը՝ սկսած 2014 թվականի հունվարի 1-ից, սոցիալական կենսաթոշակները վերափոխվեցին նպաստի):

Կենսաթոշակի չափը հաշվարկվում է հիմնական կենսաթոշակի, աշխատանքային ստաժի տևողության և աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքի հիման վրա՝ հաշվի առնելով կենսաթոշակառուի անձնական գործակիցը (կենսաթոշակառուի անձնական գործակիցը ևս հաշվարկվում է աշխատանքային ստաժի տևողության հիման վրա):

Ցանկացած երկրի կենսաթոշակային համակարգ պետք է լուծի մեկ խնդիր. կենսաթոշակառուներին տրամադրել պատշաճ չափի կենսաթոշակներ՝ բավարար կենսամակարդակ ապահովելով կենսաթոշակառուների համար:

Ընդհանրացնելով գործող կենսաթոշակային համակարգի շրջանակներում առկա խնդիրները (տե՛ս Չարդ 3)՝ փաստենք, որ մեր երկրում

վերջին 20 տարիների ընթացքում արձանագրված սոցիալ-տնտեսական իրողությունների արդյունքում ձևավորված իրավիճակը, այս առումով, հեռու է բավարար լինելուց. չնայած կենսաթոշակների ֆինանսավորումը ՀՀ պետական բյուջեի ամենամեծ ծախսային ծրագիրն է, իսկ ՀՀ կառավարությունը շարունակաբար ավելացնում է կենսաթոշակներին ուղղվող միջոցները՝ կենսաթոշակների չափերը շարունակում են մնալ ցածր և չեն կատարում իրենց հիմնական գործառույթը:

Միաժամանակ բոլոր տեսակի կանխատեսումներն ու վերլուծությունները ցույց են տալիս, որ նույնիսկ տնտեսական զարգացման ամենալավատեսական սցենարների դեպքում, գործող համակարգի շրջանակներում հնարավոր չի լինելու մեր բնակչությանն ապահովել պատշաճ կենսաթոշակով:

Չարդ 2.

Ինչպիսի՞ն է Հայաստանի կենսաթոշակային համակարգը բարեփոխումներից հետո:

Իրականացվող կենսաթոշակային բարեփոխումների նպատակն է Հայաստանի Հանրապետությունում ներդնել բազմաստիճան կենսաթոշակային համակարգ: Այսինքն, ի լրումն սերունդների համերաշխության սկզբունքով ֆինանսավորվող բաշխողական կենսաթոշակային համակարգի, ներդրվել է նաև երկու նոր՝ կուտակային և կամավոր կենսաթոշակային բաղադրիչներով համակարգ:

Բարեփոխումների արդյունքում հայաստանյան կենսաթոշակային համակարգը բաղկացած է 4 բաղադրիչներից:

0 աստիճան. այս աստիճանից սոցիալական կենսաթոշակ (նպաստներ) կտրամադրվի այն անձանց, ովքեր չունեն օրենքով սահմանված նվազագույն ստաժ և բոլորել են 65 տարեկանը, կամ ճանաչվել են հաշմանդամ, կամ կորցրել են կերակրողին: Այս բաղադրիչի հիմնական նպատակը աղքատության հաղթահարումն է: Սոցիալական կենսաթոշակները (նպաստները) ֆինանսավորվելու են ՀՀ պետական բյուջեից: Օրենքով սահմանված նվազագույն ստաժ չունենալու դեպքում սոցիալական կենսաթոշակի (նպաստի) իրավունք կունենան նաև այն անձինք, ովքեր հանդիսանում են կուտակային բաղադրիչի մասնակից:

1 աստիճան. այս աստիճանից աշխատանքային կենսաթոշակ կտրամադրվի այն անձանց, ովքեր ունեն պահանջվող նվազագույն ստաժ

և բոլորել են 63 տարեկանը, կամ ճանաչվել են հաշմանդամ, կամ կորցրել են կերակրողին: Աշխատանքային կենսաթոշակները ևս ֆինանսավորվելու են ՀՀ պետական բյուջեից: Օրենքով սահմանված նվազագույն ստաժ ունենալու դեպքում աշխատանքային կենսաթոշակ կվճարվի նաև կուտակային բաղադրիչի մասնակիցներին:

0 և 1 աստիճանները ձևավորելու են Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային ապահովության համակարգի պետական կենսաթոշակային բաղադրիչը:

2 աստիճան կամ կուտակային բաղադրիչ. այս բաղադրիչից կենսաթոշակ կվճարվի կուտակային բաղադրիչի մասնակիցներին (այն անձանց, ովքեր կատարել են սոցիալական վճարներ): Կուտակային կենսաթոշակները ֆինանսավորվելու են սոցիալական վճարներ կատարած անձանց համար (օգտին) փոխանցված կուտակային հատկացումներից ու դրանց ներդրումից ստացված եկամուտների հաշվին:

3 աստիճան կամ կամավոր կենսաթոշակային բաղադրիչ. այս բաղադրիչից կվճարվի կամավոր կուտակային կենսաթոշակ: Կամավոր կուտակային կենսաթոշակները ֆինանսավորվելու են կամավորության սկզբունքով կատարվող վճարների ու դրանց ներդրումից ստացված եկամուտների հաշվին:

Այսինքն, կենսաթոշակային բարեփոխումների արդյունքում, ի լրումն գործող համակարգի, ներդրվում են նաև կենսաթոշակների ֆինանսավորման այլ աղբյուրներ, որոնք ձևավորվում են անձի կատարած վճարումներից: Մեկ անգամ ևս փաստենք, որ կուտակային բաղադրիչը ներդրվում է ի լրումն գործող կենսաթոշակային համակարգի, այլ ոչ երբեք՝ դրա փոխարեն: Պետությունը 0 և 1 աստիճանների միջոցով պահպանում է սոցիալական պատասխանատվությունն իր քաղաքացիների հանդեպ:

Հարց 3.

Ինչու՞ էր անհրաժեշտ բարեփոխել կենսաթոշակային համակարգը:

Հայաստանի Հանրապետության գործող կենսաթոշակային ապահովության համակարգը բարեփոխելու անհրաժեշտությունը (համակարգի ընդհանուր նկարագիրը տե՛ս հարց 1) պայմանավորված է մի շարք խնդիրներով, որոնց շարքում հարկ է առանձնացնել մի քանիսը:

Նախ, գործող համակարգի շրջանակներում բացակայում է կապն անձի եկամուտների և ապագա կենսաթոշակի չափի միջև: Արդյունքում, այսօր ունենք մի իրավիճակ, երբ բարձր որակավորում ունեցող անձը, ով ամբողջ կյանքում ստացել է բարձր աշխատավարձ, ստանում է այնքան կենսաթոշակ, որքան ամբողջ կյանքում նվազագույն աշխատավարձ ստացած անձը, ինչն արդարացի չէ:

Խնդրո առարկա է նաև համակարգի ֆինանսական կայունությունը: Աշխարհում սերունդների համերաշխության սկզբունքով ֆինանսավորվող կենսաթոշակային համակարգերը համարվում են կայուն, երբ երեք աշխատողին բաժին է ընկնում մեկ կենսաթոշակառու, այսինքն՝ երեք աշխատողի կատարած վճարումներից գոյացած միջոցներից վճարվում է մեկ կենսաթոշակառուի կենսաթոշակը: Հայաստանի Հանրապետությունում մեկ կենսաթոշակառուի կենսաթոշակը վճարվում է մեկ աշխատողի կատարած վճարումներից գոյացած միջոցներից: Ակնհայտ է, որ այս պարագայում իրավիճակը շտկելու համար անհրաժեշտ են արմատական փոփոխություններ:

Այուս կարևորագույն խնդիրը, որը պարտադրում է իրականացնել կենսաթոշակային բարեփոխումներ, ժողովրդագրական վիճակի զարգացման միտումներն են:

Մասնավորապես, այսօր ունենք մի իրավիճակ, երբ բնակչության ընդհանուր թվաքանակի մեջ գնալով աճում է կենսաթոշակ ստացողների տեսակարար կշիռը և նվազում է աշխատանքային տարիքի անձանց տեսակարար կշիռը, կամ այլ կերպ ասած՝ արձանագրվում է «բնակչության ծերացում»:

Իսկ բաշխողական (պետական) կենսաթոշակային համակարգերը խիստ զգայուն են բնակչության ծերացման նկատմամբ:

Այսօր խնդիրը շատ ավելի սրված է, քանի որ առաջիկա տարիներին կենսաթոշակային տարիքի է հասնում 50-ականներին ծնված բազմաքանակ սերունդը, երբ ծնելիության ցուցանիշը եղել է բավականին բարձր (ակնկալվում է կենսաթոշակառուների թվաքանակի աճ): Փոխարենը, աշխատաշուկա է մուտք գործում շատ ցածր ծնելիության ցուցանիշ գրանցած 90-ականներին ծնված սերունդը: Այսինքն, առաջիկա տարիներին փոքրաքանակ սերունդը ստիպված է լինելու ֆինանսավորել բազմաքանակ սերնդի կենսաթոշակները:

Հարց 4.

Ո՞րն է կենսաթոշակային բարեփոխումների նպատակը և ի՞նչ արդյունքներ կարելի է ակնկալել:

Ցանկացած երկրի կենսաթոշակային համակարգ պետք է լուծի մեկ խնդիր՝ կենսաթոշակառուների համար ապահովել բավարար կենսամակարդակ:

Այս առումով, կենսաթոշակային բարեփոխումների հիմնական նպատակն է կենսաթոշակառուներին ապահովել պատշաճ կենսաթոշակով:

Հարկ է նկատի ունենալ, որ միջազգային պրակտիկայում կենսաթոշակային համակարգերի արդյունավետության հիմնական ցուցանիշն անձի աշխատավարձի և կենսաթոշակի չափի հարաբերակցությունն է (այս ցուցանիշն ընդունված է անվանել փոխհատուցման գործակից): Ըստ այդմ, համակարգը համարվում է արդյունավետ, երբ կենսաթոշակը կազմում է անձի աշխատավարձի նվազագույնը 40-45 տոկոսը (միաժամանակ համակարգը պետք է նաև ֆինանսապես լինի կայուն):

Հարկ է նկատի ունենալ, որ Հայաստանի Հանրապետությունում այդ ցուցանիշը կազմում է միջինը 25 տոկոս. միջին աշխատանքային կենսաթոշակը (շուրջ 36000 դրամ) կազմում է միջին աշխատավարձի (շուրջ 150 000 դրամ) շուրջ 25 տոկոսը: Ընդ որում, հաշվի առնելով կենսաթոշակի հաշվարկման կարգը, այս ցուցանիշը հակադարձ համեմատական է անձի եկամուտների չափին (որքան բարձր են եկամուտները, այնքան ցածր է փոխհատուցման գործակիցը):

Վերը նշված խնդիրները հաշվի առնելով՝ կենսաթոշակային բարեփոխումների (կուտակային բաղադրիչի ներդրման) թիրախային նպատակներն են.

1) ուղղակի կապ ապահովել անձի եկամուտների և ապագա կենսաթոշակի չափի միջև,

2) փոխհատուցման գործակիցը հասցնել առնվազն 45-50 տոկոսի (օրինակ, ներառյալ պետական բյուջեից վճարվող կենսաթոշակները, 200000 դրամ աշխատավարձ ստացողի կենսաթոշակի չափը պետք է կազմի շուրջ 90000 դրամ, իսկ 300000 դրամ աշխատավարձ ստացողի կենսաթոշակի չափը՝ շուրջ 135000 դրամ),

3) նվազեցնել ժողովրդագրական վիճակի զարգացման միտումների ազդեցությունը կենսաթոշակային համակարգի վրա և ապահովել

կենսաթոշակային համակարգի ֆինանսական կայունությունը երկարաժամկետ ապագայում:

Միաժամանակ, ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, կենսաթոշակային բարեփոխումների իրականացումը (կուտակային բաղադրիչի ներդրումը) հանդիսանում է տնտեսական աճի լուրջ խթան:

Սասնավորապես, ազգային խնայողությունների ձևավորման արդյունքում երկրները թոթափում են կախվածությունը օտարերկրյա ներդրումներից, իսկ պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի միջոցով կատարվող ներդրումները նպաստում են նոր աշխատատեղերի ստեղծմանը:

Թռիչքաձև զարգացում է ապրում նաև ֆինանսական շուկան, ստեղծվում են բարձր վարձատրվող աշխատատեղեր:

Չարդ 5.

Ի՞նչ մոտեցումներ գոյություն ունեն կենսաթոշակային բարեփոխումների իրականացման համար:

Միջազգային պրակտիկայում գոյություն ունի կենսաթոշակային բարեփոխումների երկու մոտեցում.

պարամետրիկ բարեփոխումներ. Երբ կենսաթոշակային համակարգում իրականացվում են իրավիճակային փոփոխություններ՝ վերանայվում են կենսաթոշակի իրավունք տվող պայմանները (տարիք, ստաժ և այլն), կենսաթոշակի չափը հաշվարկելու կարգը և այլն,

համակարգային բարեփոխումներ. Երբ վերանայվում են կենսաթոշակային համակարգի սկզբունքները (ֆինանսավորման մեխանիզմները):

Չարկ է նկատի ունենալ, որ աշխարհի շատ երկրներում շարունակաբար իրականացվում են կենսաթոշակային բարեփոխումներ:

Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ երկրները ևս բախվում են բնակչության ծերացման հիմնախնդիրներին:

Ընդ որում, խնդիրը լուծելու համար երկրները գնում են տարբեր ճանապարհներով. իրականացնում են կենսաթոշակային համակարգի պարամետրիկ բարեփոխումներ (հարկային բեռի ավելացում, կենսաթոշակային տարիքի բարձրացում, կենսաթոշակային իրավունքների կրճատում) կամ իրականացնում են կենսաթոշակային համակարգի արմատական բարեփոխումներ՝ վերանայելով կենսաթոշակային ապահովության

համակարգի ֆինանսավորման մեխանիզմները և ներդնելով ինքնաֆինանսավորվող (կուտակային) բաղադրիչ:

Ընդ որում, ամենատարբեր փորձագիտական վերլուծությունները ցույց են տալիս, որ պարամետրիկ բարեփոխումները, որպես առկա մարտահրավերներին դիմակայելու միջոցներ, կրում են իրավիճակային բնույթ և չեն ապահովում խնդրի երկարաժամկետ, կայուն լուծում:

Չարց 6.

Որքա՞ն ժամանակ է մշակվել կենսաթոշակային հայաստանյան մոդելը մինչև օրենքի ուժ ստանալը:

Կենսաթոշակային բարեփոխումները Հայաստանի Հանրապետության օրակարգային խնդիրներից են եղել Հայաստանի Հանրապետության անկախության ձեռքբերման առաջին իսկ տարիներից: Դրա վառ ապացույցն է այն, որ անկախության տարիներին, մինչև կենսաթոշակային ընթացիկ բարեփոխումների մեկնարկը, Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակային օրենսդրությունը փոխվել է 3 անգամ՝ 1992 թվականին, 1996 թվականին և 2003 թվականին (խոսքը գնում է ոչ թե գործող օրենքներում կատարված փոփոխությունների մասին, այլ սկզբունքորեն նոր օրենքների ընդունման մասին):

Վերը նշված բոլոր փոփոխությունները կրել են պարամետրիկ (իրավիճակային) բնույթ և միտված են եղել կենսաթոշակային համակարգը ձևավորված նոր սոցիալ-տնտեսական իրողություններին համապատասխանեցնելուն:

Իսկ 2004 թվականից սկսած՝ կենսաթոշակային քննարկումների հիմնական առանցքը եղել է Հայաստանում կուտակային բաղադրիչի ներդրումը:

Կուտակային բաղադրիչի առավելությունները և ռիսկերը հասկանալու համար իրականացվել է մեծածավալ վերլուծական և հետազոտական աշխատանք, մասնավորապես, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ կենտրոնական բանկի մասնագետները և պատասխանատու աշխատակիցները օտարերկրյա գործընկեր կազմակերպությունների աջակցությամբ ուսումնասիրել են Ռուսաստանի, Շվեդիայի, Էստոնիայի, Մակեդոնիայի, Չիլիի, Պերուի, Ղազախստանի, Լեհաստանի, Խորվաթիայի, Բուլղարիայի և Էլի մի շարք երկրների փորձը:

Քառամյա խորը վերլուծական և հետազոտական աշխատանքների արդյունքում, 2008թ. նոյեմբերի 13-ին ՀՀ կառավարության N 1487-Ն որոշմամբ, հաստատվեց կենսաթոշակային բարեփոխումների ծրագիրը և կենսաթոշակային բարեփոխումների իրականացումն ապահովող միջոցառումների ժամանակացույցը, որի հիման վրա էլ մշակվել են կենսաթոշակային բազմաստիճան համակարգի իրավական հիմք հանդիսացող 5 օրենքների նախագծերը: 2010թ. դեկտեմբերի 22-ին այդ օրենքներն ընդունվել են ՀՀ ԱԺ-ում և մտել ուժի մեջ 2011թ. հունվարի 1-ից:

2014 թվականի ապրիլի 2-ին Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը հրապարակեց Ազգային ժողովի մի խումբ պատգամավորների կողմից ՀՀ Սահմանադրական դատարան ներկայացված դիմումի վերաբերյալ ՍԴԻ-1142 որոշումը, որով, գործի քննության շրջանակներում, ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվեցին Կուտակային կենսաթոշակների մասին ՀՀ օրենքի մի շարք դրույթներ:

Ըստ այդմ, 2014 թվականի հունիսի 21-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովն ընդունեց «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքը՝ կուտակային բաղադրիչի իրավակարգավորումները համապատասխանեցնելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2014 թվականի ապրիլի 2-ի N ՍԴԻ-1142 որոշմանը:

Սամնավորապես, 2014 թվականի հուլիսի 1-ից սկսած՝ կուտակային բաղադրիչի մասնակիցները ՀՀ պետական բյուջե են վճարում սոցիալական վճարներ, իսկ պետությունը կրկնապատկում է այդ վճարները և մասնակիցների համար (օգտին) փոխանցում է կուտակային հատկացումներ: Մինչև 2014 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում կատարված *պարտադիր կուտակային վճարները* ամբողջությամբ ենթակա են վերադարձի՝ մասնակիցների ներկայացրած դիմումների համաձայն:

Հարց 7.

Ո՞ր երկրների փորձն է օգտագործվել հայաստանյան համակարգի մշակման համար:

Նախքան բարեփոխված կենսաթոշակային համակարգի հայաստանյան մոդելի վերջնական տարբերակի վերաբերյալ որոշում կայաց-

նելը, քաղաքականությունը մշակողների կողմից ուսումնասիրվել է կենսաթոշակային քաղաքականության վերջին տասնամյակների միջազգային փորձը, կատարվել են համադրումներ, ուսումնասիրվել են ինչպես այն մարտահրավերները, որ ծագել են կենսաթոշակային համակարգերի համանման բարեփոխումներ իրականացրած երկրներում (Լատինական Ամերիկա՝ Չիլի, Բոլիվիա, Ուրուգվայ, Մեքսիկա, Պերու, Արգենտինա, Կոլումբիա, Կոստա Ռիկա և այլն, Արևելյան և Կենտրոնական Եվրոպա՝ Լեհաստան, Յունգարիա, Ռումինիա, Բուլղարիա, Եստոնիա, Խորվաթիա, Մակեդոնիա, ինչպես նաև Ծվեդիա), այնպես էլ այդ մարտահրավերներին դիմակայելու, համակարգի հնարավոր ռիսկերը կառավարելու և նվազեցնելու փորձը:

Չարդ 8.

Արդյոք, կենսաթոշակային բարեփոխումների արդյունքում, փոփոխվե՞լ են ներկայիս կենսաթոշակառուների կենսաթոշակի հաշվարկման բանաձևը և վճարման կարգը:

Այո: Կենսաթոշակային բարեփոխումների շրջանակներում՝ 2014 թվականի հունվարի 1-ից սկսած, փոխվել է կենսաթոշակի չափը հաշվարկելու կարգը: Մասնավորապես, ներդրվել է աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքի տարբերակված չափ.

Մինչև 10 տարվա (ներառյալ) աշխատանքային ստաժի առկայության դեպքում, աշխատանքային կենսաթոշակը հաշվարկվում է

$$Կ = 3 + (U \times A) \times 9 \text{ բանաձևով,}$$

իսկ 10 տարուց ավելի աշխատանքային ստաժի առկայության դեպքում՝

$$Կ = 3 + (10 \times U + (U - 10) \times U1) \times 9 \text{ բանաձևով,}$$

որտեղ՝

Կ-ն կենսաթոշակի ամսական գումարն է,

3-ն՝ հիմնական կենսաթոշակի չափը,

U-ն՝ աշխատանքային ստաժի տարիները,

Ա-ն՝ մինչև 10 տարվա (ներառյալ) աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը,

Ա1-ը՝ 10 տարին գերազանցող աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը,

Գ-ն՝ կենսաթոշակառուի անձնական գործակիցը:

Վերանայվել է նաև կենսաթոշակառուի անձնական գործակիցը հաշվարկելու կարգը. կենսաթոշակառուի անձնական գործակիցը մինչև 10 տարվա (Ներառյալ) աշխատանքային ստաժի մեկ տարվա համար սահմանվում է 0,1 ($Q=0,1 \times U$ բանաձևով), 11-ից մինչև 40 տարվա (Ներառյալ) աշխատանքային ստաժի մեկ տարվա համար՝ 0,01 ($Q=1+0,01 \times (U-10)$ բանաձևով), 40 տարուց ավելի աշխատանքային ստաժի մեկ տարվա համար՝ 0,02 ($Q=1.3+0,02 \times (U-40)$ բանաձևով):

Կենսաթոշակառուի անձնական գործակիցը չի կարող գերազանցել 2-ը:

Օրինակներ՝

9 տարվա ստաժի դեպքում՝ $Q=0.9 (0,1 \times 9)$,

11 տարվա ստաժի դեպքում՝ $Q=1.1 (1+0,01 \times (11-10))$,

41 տարվա ստաժի դեպքում՝ $Q=1.32 (1.3+0,02 \times (41-40))$:

Հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակին տրվում է հավելում՝

- 1) առաջին խմբի համար՝ հիմնական կենսաթոշակի 40 տոկոսի չափով.
- 2) երկրորդ խմբի համար՝ հիմնական կենսաթոշակի 20 տոկոսի չափով:

2014թ. հունվարի 1-ից հիմնական կենսաթոշակը կազմում է 14000 դրամ, ապահովագրական ստաժի 1 տարվա արժեքն առաջին 10 տարվա (Ներառյալ) աշխատանքային ստաժի համար սահմանվել է 700 դրամ, 11-ից ավելի յուրաքանչյուր աշխատանքային ստաժի համար 450 դրամ:

Հարց 9.

Ինչպիսի՞ փոփոխություններ են կատարվել հարկային օրենսդրությունում՝ կապված կենսաթոշակային բարեփոխումների հետ:

Կենսաթոշակային բարեփոխումների իրականացման հետ կապված բարեփոխումներ են իրականացվելու նաև հարկային օրենսդրությունում: 2013թ. հունվարի 1-ից եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարի փոխարեն ներդրվել է մեկ միասնական՝ եկամտային հարկ: Աշխատավարձից և դրան հավասարեցված այլ եկամուտներից հաշվարկվող եկամտային հարկի դրույքաչափը կազմում է՝

մինչև 120000 դրամ ամսական եկամտի դեպքում՝ հարկվող եկամտի 24.4 տոկոսը,

120 000 - 2 000 000 դրամ ամսական եկամտի դեպքում՝ 29280 դրամին գումարած 120000 դրամը գերազանցող գումարի 26 տոկոսը,

2 000 000 դրամից ավելի ամսական եկամտի դեպքում՝ 518080 դրամին գումարած 2000000 դրամը գերազանցող գումարի 36 տոկոսը:

Անհատ ձեռնարկատերերը և նոտարները եկամտային հարկը հաշվարկում են հետևյալ դրույթաչափերով.

մինչև 1 440 000 դրամ տարեկան եկամտի դեպքում՝ հարկվող եկամտի 24.4 տոկոսը,

1 440 000 դրամից ավելի տարեկան եկամտի դեպքում՝ 351.360 դրամին գումարած 1.440.000 դրամը գերազանցող գումարի 26 տոկոսը:

Միաժամանակ, կամավոր կենսաթոշակային բաղադրիչի ներդրմամբ պայմանավորված՝ սահմանվել են որոշակի հարկային արտոնութուններ:

Մասնավորապես, «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ կամավոր կուտակային կենսաթոշակային սխեմայի շրջանակում հարկ վճարողի կողմից իր համար և (կամ) հարկ վճարողի համար երրորդ անձի (այդ թվում՝ գործատուի) կողմից կատարված կուտակային վճարները՝ հարկ վճարողի հարկվող եկամտի 5 տոկոսը չգերազանցող չափով, համարվում է նվազեցվող եկամուտ:

Իսկ «Ճահուփահարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ գործատուի կողմից վարձու աշխատողի համար կամավոր կուտակային կենսաթոշակային ապահովագրության պայմաններով կատարված վճարումները, տվյալ վարձու աշխատողի աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների 5 տոկոսը չգերազանցող մասով դասվում են ծախսերի թվին (նվազեցվում է շահութահարկի բազայից), իսկ հարկվող շահույթը որոշելիս՝ համախառն եկամուտը նվազեցվում է հարկատուի յուրաքանչյուր վարձու աշխատողի համար հարկատուի կատարած կամավոր կուտակային վճարումների 50 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան տվյալ վարձու աշխատողի աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների 2.5 տոկոսի չափով:

ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Չարդ 10.

Ուլքե՞ր են 2014թ. հուլիսի 1-ից մասնակցում կուտակային բաղադրիչին:

Կուտակային բաղադրիչին մասնակցում են՝

1. 1974թ. հունվարի 1-ին և դրանից հետո ծնված վարձու աշխատողները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝ եթե կատարում են սոցիալական վճարներ,

2. մինչև 1974թ. հունվարի 1-ը ծնված վարձու աշխատողները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝ եթե կենսաթոշակային ֆոնդի ընտրության դիմումի հիման վրա ստանձնել են սոցիալական վճար կատարելու պարտականություն,

3. Ինքնազբաղված անձինք՝ անկախ տարիքից, եթե կենսաթոշակային ֆոնդի ընտրության դիմումի հիման վրա ստանձնել են սոցիալական վճար կատարելու պարտականություն:

Չարդ 11.

Չնարավո՞ր է արդյոք հրաժարվել սոցիալական վճարի կատարումից:

1974թ. հունվարի 1-ին և դրանից հետո ծնված անձը իրավունք ունի հրաժարվելու մինչև 2017 թվականի հուլիսի 1-ը սոցիալական վճար կատարելու պարտականությունից՝ հարկային մարմնին ներկայացնելով համապատասխան դիմում:

Վարձու աշխատողը համակարգից հրաժարվելու դիմումը ներկայացնում է գործատուի միջոցով:

Չամակարգից հրաժարվելու դիմումը անձը կարող է ներկայացնել մինչև 2014 թվականի դեկտեմբերի 25-ը:

Չարդ 12.

Ովքե՞ր չեն կարող հրաժարվել կուտակային բաղադրիչին մասնակցությունից:

Սոցիալական վճարներ կատարելուց չեն կարող հրաժարվել՝

ա) 1974թ. հունվարի 1-ին և դրանից հետո ծնված պետական համակարգի բոլոր վարձու աշխատողները: Ընդ որում՝ եթե նշված անձինք ընդգրկված են սոցիալական փաթեթի ծրագրում, ապա իրավունք ունեն իրենց սոցիալական փաթեթի գումարը (բացառությամբ ամողջապահության փաթեթի համար նախատեսված 52 000 դրամից)՝ որպես սոցիալական վճար, փոխանցել իրենց կենսաթոշակային հաշվին:

բ) 2014թ. հուլիսի 1-ից հետո աշխատաշուկա մուտք գործած՝ 1974թ. հունվարի 1-ին և դրանից հետո ծնված բոլոր անձինք, ովքեր 2014թ. հուլիսի 1-ի դրությամբ չեն աշխատել:

Եթե անձը ծնվել է 1996 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո և 2014թ. հուլիսի 1-ից հետո մուտք է գործում աշխատաշուկա (2014թ. հուլիսի 1-ի դրությամբ չի աշխատել), ապա նրա կողմից վճարվող սոցիալական վճարի գումարը, մինչև 2017թ. հուլիսի 1-ը, նվազեցվելու է մասնակցի եկամտային հարկի գումարից:

Չարդ 13.

Ովքե՞ր են համարվում պետական համակարգի վարձու աշխատողներ:

Կուտակային բաղադրիչի շրջանակներում պետական համակարգի վարձու աշխատողներ են համարվում՝

ա) Հանրային ծառայողները (բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ոստիկանության, ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմինների և Հայաստանի փրկարար ծառայության համակարգի հրամանատարական և ոչ հրամանատարական կազմի ծառայողների, քրեակատարողական ծառայողների և դատական ակտերի հարկադիր կատարողների)

բ) Պետական կառավարչական հիմնարկներում, համայնքային կառավարչական հիմնարկներում և դրանց կառուցվածքային և ամանձնացված ստորաբաժանումներում, պետական ոչ ամևտրային կազմակերպություններում, համայնքային ոչ ամևտրային կազմակերպություններում,

ՀՀ Կենտրոնական բանկում աշխատանքային և/կամ քաղաքացիաիրավական պայամանագրով եկամուտ ստացող անձինք:

Չափ 14.

Ինչո՞ւ են կուտակային բաղադրիչին պարտադիրության սկզբունքով մասնակցում 1974 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնվածները:

Կուտակային բաղադրիչին պարտադիր մասնակցության շեմը սահմանվել է կենսաթոշակային բարեփոխումների թիրախային ցուցանիշների հաշվառմամբ, նկատի ունենալով՝ այդ թիրախային ցուցանիշներին հնարավորինս շուտ հասնելու նպատակադրումը:

Մասնավորապես, որպես թիրախային ցուցանիշ, սահմանվել է շուրջ 45-50 տոկոս փոխհատուցման գործակիցը (այսինքն՝ կենսաթոշակի չափը պետք է կազմի աշխատավարձի շուրջ 45-50 տոկոսը):

Կուտակային բաղադրիչի շրջանակներում ձևավորվող կենսաթոշակի չափը կախված է կուտակած միջոցների չափից, ինչն էլ իր հերթին, ի թիվս այլ գործոնների, պայմանավորված է անձի կողմից կուտակելու ժամանակահատվածով: Իրականացված հաշվարկները ցույց են տվել, որ նվազագույնը 20-25 տարվա ընթացքում կուտակելու դեպքում է հնարավոր ապահովել վերը նշված ցուցանիշը:

Մասնակցության տարիքային շեմը բարձրացնելու (ավելի պակաս ժամանակահատված կուտակելու) դեպքում համակարգն արդյունավետ չի լինի (հնարավոր չի լինի ապահովել կենսաթոշակային բարեփոխումների թիրախային ցուցանիշը՝ 45-50 տոկոս փոխհատուցման գործակիցը):

Մյուս կողմից, առաջիկայում կանխատեսվում է կենսաթոշակառուների թվաքանակի աճ՝ պայմանավորված այն հանգամանքով, որ 2015-2045 թվականներին կենսաթոշակի իրավունք է ձեռք բերում 50-80-ական թվականներին ծնված սերունդը, երբ ծնելիությունը եղել է բարձր:

Չափ 15.

Ովքե՞ր չեն մասնակցում կուտակային բաղադրիչին:

Չինձառայողները և զինձառայողներին հավասարեցված անձինք (ՀՀ զինված ուժերի ծառայողները, ոստիկանները, ՀՀ ազգային անվտան-

գության ծառայության ծառայողները, հարկադիր կատարողները, քրեակատարողական ծառայողները, փրկարարական ծառայության ծառայողները)՝ անկախ տարիքից, կուտակային բաղադրիչի պարտադիր մասնակիցներ չեն:

Չարդ 16.

Մասնակցելը՝ Էն արդյոք կուտակային բաղադրիչին ժամկետային զինծառայողները, ուսանողները և դեկրետային արձակուրդի մեջ գտնվող կանայք:

«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի համաձայն, կուտակային բաղադրիչի պարտադիր մասնակից են հանդիսանում վարձու աշխատողները, նոտարները և անհատ ձեռնարկատերերը: Կենսաթոշակային այս բաղադրիչի առանձնահատկություններից մեկն այն է, որ անհատական կենսաթոշակային հատկացումները կատարվում են մասնակցի բազային եկամտից: Սա նշանակում է, որ կյանքի բոլոր այն ժամանակահատվածներում, երբ մասնակիցը չի ստանում բազային եկամուտ, չի կատարում նաև սոցիալական վճարներ: Մասնակցի կյանքում այդպիսի ժամանակահատվածներ են գործազրկության, ուսումնառության, պարտադիր զինվորական ծառայության, երեխայի՝ մինչև 3 տարեկան դառնալը, խնամքի հետ կապված արձակուրդի և այլն ժամանակահատվածները:

Եթե կուտակային բաղադրիչի ներդրման պահին 1974թ. հունվարի 1-ին և դրանից հետո ծնված քաղաքացին համարվում է գործազուրկ, ուսանող է, գտնվում է պարտադիր ժամկետային զինծառայության, երեխայի՝ մինչև 3 տարեկան դառնալը խնամքի հետ կապված արձակուրդի մեջ, ապա այդ փուլում համարվում է պարտադիր բաղադրիչի «պասիվ մասնակից»: Սա նշանակում է, որ այն պահին, երբ քաղաքացին սկսի աշխատել որպես վարձու աշխատող, նոտար կամ անհատ ձեռնարկատեր և ստանա բազային եկամուտ, այդ պահից սկսած էլ կկատարի սոցիալական վճարներ:

Սակայն մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող մասնակցի համար (օգտին), մինչև երեխայի երկու տարին լրանալը (18.000 դրամ նպաստ ստանալուն զուգահեռ), կատարվում է կուտակային հատկացում՝ ամսական 8000 դրամի չափով, որից 3000 դրամը վճարում է գործատուն՝ որպես սոցիալական վճար, իսկ 5000 դրամը փոխանցվում է պետական բյուջեից՝ որպես լրացուցիչ հատկացում:

Հարց 17.

Ինչպե՞ս է կարգավորվելու անձի մասնակցությունը կուտակային բաղադրիչին, եթե նա չունի բազային եկամուտ:

Եթե անձը չունի բազային եկամուտ, ապա նա չի կատարում սոցիալական վճար: Այնուամենայնիվ, այդ անձինք չեն զրկվի պետական կենսաթոշակային համակարգից կենսաթոշակ ստանալու իրավունքից և 65 տարին լրանալուց հետո ձեռք կբերեն սոցիալական կենսաթոշակի (նպաստի) իրավունք: Իսկ եթե անձն ունենա 10 և ավելի տարվա աշխատանքային ստաժ, ապա նա կստանա աշխատանքային կենսաթոշակ:

Հարց 18.

Անձն օտարերկրացի է կամ չունի քաղաքացիություն և աշխատում է Հայաստանում. արդյոք նա պե՞տք է մասնակցի կուտակային բաղադրիչին:

Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք ունեցող օտարերկրացին և քաղաքացիություն չունեցող անձը կուտակային բաղադրիչին մասնակցում է ընդհանուր հիմունքներով, եթե աշխատում է Հայաստանի Հանրապետությունում (ստանում է աշխատավարձ, որը հարկվում է եկամտային հարկով):

Այսինքն, եթե վերը նշված օտարերկրացին և քաղաքացիություն չունեցող անձը ծնվել է 1974թ. հունվարի 1-ին և դրանից հետո, ապա կուտակային բաղադրիչի մասնակցից է և իր աշխատավարձից կատարում է սոցիալական վճար, իսկ եթե ծնվել է մինչև 1974թ. հունվարի 1-ը, ապա կուտակային բաղադրիչին կարող է մասնակցել կամավորության սկզբունքով:

Նշված անձը, ընդհանուր հիմունքներով, կարող է մինչև 2017 թվականի հուլիսի 1-ը հրաժարվել սոցիալական վճար կատարելուց (տես հարց 11 և 12):

Չարք 19.

Անձն ունի գյուղատնտեսական նշանակության հող՝ սեփականության իրավունքով: Ինչպե՞ս է կարգավորվում նրա մասնակցությունը նոր կենսաթոշակային համակարգին:

Գյուղատնտեսական նշանակության հողերի սեփականատերերը՝ անկախ այն հանգամանքից, նրանք ծնվել են 1974թ. առաջ թե հետո, համարվում են ինքնազբաղվածներ և կուտակային բաղադրիչին կարող են մասնակցել կամավորության սկզբունքով: Նրանք պարտավոր չեն կատարել սոցիալական վճարներ, եթե կամավոր չեն միացել կուտակային բաղադրիչին: Կամավոր միանալու դեպքում, նրանք կկատարեն 5% կուտակային վճար, սակայն պետական բյուջեից կուտակային վճար չի փոխանցվի նրանց կենսաթոշակային հաշիվներին: Ընդ որում, այս անձինք սոցիալական վճարը ևս կատարում են կամավորության սկզբունքով:

Անկախ կուտակային բաղադրիչին մասնակցելու հանգամանքից, այս անձինք պետական բյուջեից կստանան սոցիալական կենսաթոշակ (նպաստ):

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Չափ 20.

Ի՞նչ է սոցիալական վճարը:

Սոցիալական վճարը օրենքով սահմանված կարգով և չափով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող նպատակային վճար է:

Չափ 21.

Որքա՞ն է կազմում սոցիալական վճարի դրույթաչափը:

Սոցիալական վճարի դրույթաչափը կազմում է աշխատավարձի (անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի դեպքում՝ տարեկան եկամտի) 5 %-ը: Սկսած 2020 թվականի հուլիսի 1-ից, եթե աշխատավարձի չափը գերազանցում է 500 000 դրամը (անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի տարեկան եկամուտը՝ 6 000 000 դրամը), ապա սոցիալական վճարը հաշվարկվում է աշխատավարձի 10 տոկոսի և 25 000 դրամի տարբերության չափով (անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի դեպքում՝ տարեկան եկամտի՝ 10 տոկոսի և 300 000 դրամի տարբերության չափով):

Օրենքով սահմանվում է սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի առավելագույն շեմ՝

- մինչև 2020 թվականը. ամսական՝ 500 000 դրամ, տարեկան՝ 6 000 000 դրամ,
- սկսած 2020 թվականից. ամսական՝ նվազագույն ամսական աշխատավարձի 15-ապատիկը, տարեկան՝ նվազագույն ամսական աշխատավարձի 180-ապատիկը (մինչև 2020 թվականը սոցիալական վճարի ամսական գումարը չի կարող գերազանցել 25000 դրամը):

Եթե անձը եկամուտ է ստանում մի քանի աղբյուրից, ապա սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտի առավելագույն շեմը գերազանցող գումարներից գործատուի (հարկային գործակալի) կողմից հաշվարկված և փոխանցված (գանձված) գումարները Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով վերադարձվում են անձին:

Հարց 22.

Ի՞նչ ժամկետներում և ընթացակարգով է մասնակցին վերադարձվում մի քանի աղբյուրից ստացված եկամտից փոխանցվող` սոցիալական վճարի առավելագույն չափը գերազանցող գումարը:

Մի քանի աղբյուրից աշխատավարձ ստացող այն մասնակիցներին, որոնց կողմից վճարվող սոցիալական վճարի չափը գերազանցում է օրենքով սահմանված առավելագույն շեմը, հարկային մարմինը ուղարկում է ծանուցում վերադարձվող գումարի ամկայության մասին:

Առաջին անգամ այդ ծանուցումը ուղարկվում է հաշվետու ամսվա եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկով և (կամ) տարեկան եկամուտների մասին հաշվարկով հաշվարկված սոցիալական վճարի մարման օրվանից հետո 10-օրյա ժամկետում` էլեկտրոնային փոստի միջոցով, իսկ անհնարինության դեպքում` փոստային առաքմամբ:

Վերադարձվող գումարները փոխանցելու նպատակով ծանուցման մեջ նշում է կատարվում բանկային տվյալները ներկայացնելու անհրաժեշտության մասին:

Մասնակցի կողմից իր գտնվելու վայրի հարկային (տարածքային) տեսչություն բանկային տվյալները ներկայացնելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում հարկային մարմինը գանձապետարան է ներկայացնում վճարման հանձնարարական:

Հետագայում վերադարձվող գումարների առաջացման դեպքում մասնակցին ծանուցում չի ուղարկվում, իսկ հանձնարարականը գանձապետարան է ներկայացվում վերադարձվող գումարների առաջացման օրվանից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Վերադարձվող գումարները մասնակցի բանկային հաշվին են փոխանցվում հանձնարարականը ներկայացնելու օրվանից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:

Հարց 23.

Ի՞նչ է կուտակային հատկացումը:

Կուտակային հատկացումը օրենքով սահմանված կանոնների համաձայն` պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայեր ձեռք բերելու

Նպատակով սոցիալական վճար կատարող անձի համար (օգտին) կատարվող դրամական հատկացում է:

Չարդ 24.

Ինչպե՞ս է ձևավորվում կուտակային հատկացումը:

1974 թվականի հունվարի 1-ից հետո ծնված անձի համար (օգտին) և մինչև 2017 թվականի հուլիսի 1-ը սոցիալական վճար կատարելու պարտավորություն ստանձնած՝ 1964 թվականի հունվարի 1-ից հետո ծնված անձի համար (օգտին) կատարվող կուտակային հատկացումը ձևավորվում է սոցիալական վճարներից և Չայաստանի Չանրապետության պետական բյուջեից հատկացվող միջոցներից: Այս դեպքերում կուտակային հատկացման չափը (դրույքաչափը) կազմում է աշխատավարձի 10 %-ը (5 տոկոսը՝ անձի կատարած սոցիալական վճարի դիմաց, իսկ մնացածը (5 տոկոսը՝ բայց ոչ ավելի, քան 25000 դրամ) որպես ՉՅ պետական բյուջեից հատկացված լրացուցիչ միջոցներ):

Մնացած դեպքերում կուտակային հատկացման չափը (դրույքաչափը) կազմում է աշխատավարձի 5 %-ը, որն ամբողջությամբ ձևավորվում է սոցիալական վճարներից:

Չարդ 25.

Ինչի՞ հիման վրա է սահմանվել կուտակային հատկացման 10% դրույքաչափը:

Կուտակային հատկացման դրույքաչափը սահմանվել է կենսաթոշակային բարեփոխումների թիրախային նպատակների հաշվառմամբ:

Մասնավորապես, որպես կենսաթոշակային բարեփոխումների թիրախային ցուցանիշ, սահմանվել է շուրջ 45-50 տոկոս փոխհատուցման գործակիցը (այսինքն կենսաթոշակի չափը պետք է կազմի աշխատավարձի շուրջ 45-50 տոկոսը):

Կուտակային բաղադրիչի շրջանակներում ձևավորվող կենսաթոշակի չափը կախված է կուտակած միջոցների չափից, ինչն էլ իր հերթին, բացի կուտակելու ժամանակահատվածից, պայմանավորված է նաև հետևյալ գործոններով.

- 1) կուտակվող միջոցների չափ,

2) կառավարման ներքո գտնվող կենսաթոշակային ակտիվների (պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի) եկամտաբերություն:

Հարկ է նկատի ունենալ, որ պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի եկամտաբերությունն էլ իր հերթին, կախված է պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի ծավալից և դրանց կառավարման քաղաքականությունից:

Ավելի փոքր չափով սոցիալական վճարների դեպքում էապես նվազում է համակարգի արդյունավետությունը, քանի որ կառավարվող փոքր ծավալների ակտիվների կառավարման ծախսերը էապես բարձրանում են: Միևնույն ժամանակ, փոքր կուտակումներն ուղղակիորեն հանգեցնում են փոքր կենսաթոշակների, ինչը չի լուծում բարեփոխման հիմքում դրված խնդիրը:

Հարց 26.

Ի՞նչ կարգով են կատարվելու սոցիալական վճարները նվազագույն աշխատավարձից:

Նվազագույն աշխատավարձ ստացող մասնակիցների համար սոցիալական վճար կատարում է գործատուն՝ համապատասխան չափով բարձրացնելով անվանական աշխատավարձը:

Եկամտային հարկը և սոցիալական վճարը կատարելուց հետո անձի տնօրինվող եկամուտը չպետք է պակաս լինի նվազագույն աշխատավարձի չափից: 2014 թվականի հուլիսի 1-ի դրությամբ այն կազմում է 50.000 դրամ:

Հարց 27.

Ի՞նչ տրամաբանությամբ է սահմանված պետության կողմից 5%-ի համաֆինանսավորումը, չէ՞ որ պետական բյուջեն նույնպես ձևավորվում է քաղաքացիների հարկերից:

Պետությունն իր առջև դրված նպատակներին հասնելու համար իրականացնում է որոշակի հարկաբյուջետային քաղաքականություն՝ հարկերի հավաքագրման և պետական ծախսերի պլանավորման միջոցով: Պետության կողմից սոցիալական վճարների 5% համաֆինանսավորումը կազմում է բարեփոխման հայաստանյան մոդելի մի մասը և, բնականաբար, ևս ֆինանսավորվում է պետական բյուջեի միջոցներից:

Հարց 28.

Անհատ ձեռնարկատերն ի՞նչ դրույքաչափով է կատարում սոցիալական վճարները:

Անհատ ձեռնարկատեր հանդիսացող և ընդհանուր հարկման դաշտում գտնվող մասնակիցը տարեկան կատարում է սոցիալական վճար իր բազային եկամտի 5%-ի չափով, իսկ 10%-ը լրացնելու նպատակով մնացած 5%-ը մասնակցի համար (օգտին) վճարվում է պետական բյուջեից:

Սահմանվում է սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի առավելագույն տարեկան շեմ.

- մինչև 2020 թվականը՝ 6 000 000 դրամ,
- սկսած 2020 թվականից՝ նվազագույն ամսական աշխատավարձի 180-ապատիկը:

Ըստ այդմ, եթե մասնակցի՝ տարեկան եկամուտը գերազանցում է 6,000,000 դրամը ապա մինչև 2020 թվականի հուլիսի 1-ը մասնակցի կողմից կատարվող սոցիալական վճարի չափը կկազմի տարեկան 300 000 դրամ, և այդ քան կփոխանցի պետությունը: Այս դեպքում, սկսած 2020 թվականի հուլիսի 1-ից՝ սոցիալական վճարը կհաշվարկվի տարեկան եկամտի 10 տոկոսի և 300 000 դրամի տարբերության չափով (այսինքն, անհատ ձեռնարկատիրոջ օգտին պետական բյուջեից տարեկան վճարի չափը կազմում է առավելագույնը 300.000 դրամ, իսկ սկսած 2020 թվականի հուլիսի 1-ից, 10%-ը լրացնելու նպատակով, մնացած գումարը կվճարվի մասնակցի կողմից):

2. Անհատ ձեռնարկատերը ամսական կատարում է սոցիալական վճար 5000 դրամի չափով, եթե հանդիսանում է.

«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված հաստատագրված վճարներով հարկվող, կամ

«Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի հավելված 7-ի ցանկում ընդգրկված գործունեությունն իրականացնող, կամ

«Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքով շրջանառության հարկով հարկվող գործունեությունն իրականացնող:

Այդս գումարը համարվում է «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հաստատագրված վճարներով հարկվող կամ «Արտոնագրային վճարների մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի հավելված 7-ի ցանկում ընդգրկված կամ «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով շրջանառության հարկով հարկվող գործունեության տեսակներից ստացվող եկամուտներից հաշվարկված սոցիալական վճարի գծով վերջնական պարտավորություն, իսկ ամսական 5000 դրամի չափով մասնակցի համար (օգտին) վճարվում է պետական բյուջեից:

Գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու դեպքում նրանք չեն կատարում սոցիալական վճարներ: Այս դեպքում այս մասնակիցների համար պետական բյուջեից նույնպես հատկացումներ չեն կատարվի:

Հարց 29.

Ե՞րբ են կուտակային բաղադրիչի մասնակիցները սկսել սոցիալական վճարներ կատարել:

Կուտակային բաղադրիչն ուժի մեջ է մտել 2014թ. հուլիսի 1-ից: Վարձու աշխատողները առաջին անգամ սոցիալական վճարները կատարում են մինչև 2014թ. օգոստոսի 20-ը՝ 2014թ. հուլիս ամսվա աշխատավարձից, այդ թվում՝ քաղաքացիաիրավական պայմանագրերից ստացած եկամուտներից:

Կուտակային բաղադրիչի մասնակից հանդիսացող նոտարները, անհատ ձեռնարկատերերը և ինքնազբաղվածները սոցիալական վճարները կկատարեն տարեկան կտրվածքով՝ մինչև հաշվետու տարվան հաջորդ տարվա ապրիլի 30-ը (առաջին անգամ՝ մինչև 2015 թվականի ապրիլի 30-ը): Հաշվետու տարվա ընթացքում նրանք կարող են կատարել նաև սոցիալական վճարի կանխավճարներ:

Հարց 30.

Ի՞նչ է տեղի ունենալու 2014թ. հունվարի 1-ից մինչև հուլիսի 1-ը կատարված պարտադիր կուտակային վճարների հետ:

2014թ. հունվարի 1-ից մինչև հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում կատարված կուտակային վճարները մասնակիցների ներկայացրած դիմումների համաձայն, վերադարձվում են նրանց՝ 2015թ. հունվարի 1-ից սկսած մինչև հուլիսի 1-ը:

Դիմումի հիման վրա վերադարձվում են միայն մասնակցի կողմից կատարված կուտակային վճարները:

Եթե 2014թ. հունվարի 1-ից մինչև հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում կատարված կուտակային վճարները ստանալու դիմում ներկայացրած անձը կատարում է սոցիալական վճարներ, ապա ՀՀ պետական բյուջեից փոխանցված կուտակային վճարները մնում են մասնակցի կենսաթոշակային հաշվին:

Եթե կատարված կուտակային վճարները ստանալու դիմում ներկայացրած անձը հրաժարվել է սոցիալական վճարներ կատարելու պարտականությունից, ապա ՀՀ պետական բյուջեից փոխանցված կուտակային վճարները վերադարձվում են պետական բյուջե:

Կատարված կուտակային վճարները ստանալու դիմումը մասնակիցը ռեեստրը վարողին՝ Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիային, կարող է ներկայացնել 2014թ. սեպտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 25-ն ընկած ժամանակահատվածում՝ www.ePension.am կայքի ԻՄ ՀԱՇԻՎԸ համակարգի կամ հաշվի օպերատորների միջոցով:

Հարց 31.

Ո՞վ է հաշվարկում և փոխանցում աշխատողի սոցիալական վճարը:

Վարձու աշխատողի սոցիալական վճարը հաշվարկում և փոխանցում է գործատուն, որպես հարկային գործակալ, յուրաքանչյուր ամիս հարկային մարմին ներկայացնելով անձնավորված հաշվետվություն՝ աշխատողին վճարված եկամուտների և կատարված սոցիալական վճարի վերաբերյալ:

Անհատ ձեռնարկատերը, նոտարը, ինքնազբաղված անձը և աշխատողը, որի գործատուն ազատված է հարկային գործակալի պարտականություններից, ինքնուրույն են հաշվարկելու և ՀՀ պետական գանձապետարան փոխանցելու սոցիալական վճարները:

Չարք 32.

Ո՞րն է գործատուի դերը բազմաստիճան կենսաթոշակային համակարգում, մասնավորապես՝ կուտակային բաղադրիչում:

Կուտակային բաղադրիչում գործատուն ունի երկու հիմնական դեր՝

1. Նվազագույն աշխատավարձ ստացող վարձու աշխատողների սոցիալական վճարների կատարումը՝ համապատասխան չափով բարձրացնելով անվանական աշխատավարձը այնպես, որ եկամտային հարկի և սոցիալական վճարի պահումից հետո աշխատողի տնօրինվող եկամուտը պակաս չլինի նվազագույն աշխատավարձի մասին ՅՅ օրենքով սահմանված գումարից: 2014 թվականի հուլիսի 1-ի դրությամբ նվազագույն աշխատավարձը Յայաստանում կազմում է 50 000 ՅՅ դրամ:
2. Չարկային գործակալի գործառույթների իրականացում.

Օրենքով սահմանված ժամկետներում և կարգով էլեկտրոնային եղանակով հարկային մարմնում գրանցում է իր հետ աշխատանքային կամ քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ գտնվող վարձու աշխատողներին և պայմանագրային եկամուտ ստացողներին,

«Եկամտային հարկի մասին» ՅՅ օրենքով, եկամտային հարկը հաշվարկելու և վճարելու համար սահմանված ժամկետներում և «Կուտակային կենսաթոշակների մասին» ՅՅ օրենքով սահմանված դրույքաչափով, հաշվարկում և փոխանցում է պարտադիր բաղադրիչի մասնակից հանդիսացող վարձու աշխատողների և պայմանագրային եկամուտ ստացողների սոցիալական վճարները,

«Եկամտային հարկի մասին» ՅՅ օրենքով սահմանված ժամկետում էլեկտրոնային եղանակով հարկային մարմին է ներկայացնում անձնավորված հաշվարկ,

Նախորդ հաշվետու ժամանակահատվածների համար ներկայացված սոցիալական վճարի հաշվարկներում սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում (բացառապես էլեկտրոնային եղանակով) հարկային մարմին է ներկայացնում ճշտված հաշվարկներ, որի հիման վրա կատարվում է այդ ժամանակահատվածների համար սոցիալական վճարների պարտավորությունների վերահաշվարկ

Հիշենք. Եթե գործատուն չի հանդիսանում հարկային գործակալ, ապա սոցիալական վճարների հաշվարկի և փոխանցման պարտավորությունը կրում է մասնակիցը:

Հարց 33.

Մասնակիցը սոցիալական վճարումներին ֆիզիկական մասնակցություն ունենում է, թե՞ ոչ:

«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի համաձայն, վարձու աշխատողի կամ պայմանագրային եկամուտ ստացող մասնակցի համար սոցիալական վճարները հաշվարկելու և փոխանցելու պարտականությունը (Հոդված 7, մաս 1-ին) կրում է գործատուն, որպես հարկային գործակալ:

Գործատուն, օրենքով սահմանված ժամկետներում և կարգով էլեկտրոնային եղանակով հարկային մարմնում գրանցում է իր հետ աշխատանքային կամ քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ գտնվող վարձու աշխատողներին և պայմանագրային եկամուտ ստացողներին: Գործատուն (որպես հարկային գործակալ, «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով եկամտային հարկը հաշվարկելու և վճարելու համար սահմանված ժամկետներում) «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածում սահմանված դրույթաչափով հաշվարկում և փոխանցում է մասնակից հանդիսացող վարձու աշխատողների և պայմանագրային եկամուտ ստացողների սոցիալական վճարները:

Այլ կերպ ասած, վարձու աշխատողի կամ պայմանագրային եկամուտ ստացողի կարգավիճակ ունեցող մասնակիցը ֆիզիկապես չի առնչվում սոցիալական վճարների կատարման հետ:

Մասնակիցն ինքն անձամբ է կատարում սոցիալական վճարները հետևյալ դեպքերում.

ա) եթե հանդիսանում է նոտար, անհատ ձեռնարկատեր կամ ինքնազբաղված անձ,

բ) եթե վարձու աշխատող կամ պայմանագրային եկամուտ ստացող մասնակցի գործատուն ազատված է հարկային գործակալի պարտականություններից:

Ընդ որում, մասնակիցը, որպես նոտար, անհատ ձեռնարկատեր կամ ինքնազբաղված անձ՝ սոցիալական վճարը կատարում է տարեկան կտրվածքով, մինչև հաջորդ տարվա մայիսի 1-ը:

Իսկ հարկային գործակալի պարտականություններից ազատված գործատուի վարձու աշխատող մասնակիցը սոցիալական վճարը կատարում է ամսական կտրվածքով՝ գործատուի համար սահմանված ժամկետներում (մինչև հաջորդ ամսվա 20-ը):

Չարդ 34.

Անձը կարող է, արդյոք, վերահսկել՝ իր գործատունն կատարել է սոցիալական վճար, թե՞ ոչ:

Անձը կարող է դիմել գործատուին, պահանջելով՝ համապատասխան տեղեկատվություն իր անունից կատարված սոցիալական վճարների փոխանցումների մասին: Գործատուից հավաստի տեղեկություններ չստանալու կամ կասկածներ ունենալու դեպքում, անձը կարող է դիմել հարկային մարմին: Չարկային մարմինը վարում է անձանց եկամուտների, վճարված եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառում: Յուրաքանչյուր վարձու աշխատողի, անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի և ինքնազբաղվածի համար հարկային մարմնում բացվում է անհատական հաշիվ, որտեղ գրանցվում են, թե որքա՞ն է կազմել տվյալ անձի եկամուտը՝ հաշվետու ժամանակահատվածում (վարձու աշխատողի համար՝ յուրաքանչյուր ամիս, անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի և ինքնազբաղվածի համար՝ յուրաքանչյուր տարի), ինչքա՞ն են կազմել եկամտային հարկի և սոցիալական վճարի գումարները և որքա՞ն սոցիալական վճար է կատարվել: Տվյալները հասանելի են անհատական հաշվի իրավատիրոջ համար:

Մասնակիցն իր կուտակած կենսաթոշակային միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը կարող է ստանալ նաև հաշվի օպերատորների գրասենյակներից կամ «Իմ հաշիվը» ինտերնետային էջից:

Չարդ 35.

Ի՞նչ է անձնավորված հաշվառումը: Արդյո՞ք մասնակիցը հնարավորություն ունի տեսնել հարկային մարմնում իր անհատական հաշիվը՝ հավաստիանալու համար,

որ իր փոխարեն գործատուն կատարել է բոլոր վճարումները և տեսնել վճարումների պատմությունը:

Յարկային մարմինը աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով վարում է ձևակերպված աշխատողների և նրանց գործատուների, ինչպես նաև ինքնազբաղվածների, անհատ ձեռնարկատերերի ու նոտարների կողմից կատարված սոցիալական վճարի և եկամտային հարկի անձնավորված հաշվառում: Յուրաքանչյուր աշխատողի, անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի և ինքնազբաղվածի համար հարկային մարմնում բացվել է անհատական հաշիվ, որը հիմնված է անձի հանրային ծառայությունների համարանիշի վրա: Անձի անհատական հաշվում գրանցվում է, թե որքա՞ն է կազմել տվյալ անձի բազային եկամուտը (աշխատավարձը և քաղաքացիաիրավական պայմանագրերից ստացվող այլ եկամուտները) հաշվետու ժամանակահատվածում (վարձու աշխատողի համար յուրաքանչյուր ամիս, անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի և ինքնազբաղվածի համար յուրաքանչյուր տարի), ինչքա՞ն են կազմել եկամտային հարկի և սոցիալական վճարի գումարները և որքա՞ն կուտակային վճար է կատարվել:

Անձնավորված հաշվառման համակարգում ամփոփված տվյալները հասանելի են անհատական հաշվի իրավատիրոջ համար: Նա կարող է դիմել հարկային մարմին՝ իր անհատական հաշվի քաղվածքը ստանալու համար: Անհատական հաշվի քաղվածքը տարին մեկ անգամ, անձին կտրամադրվի անվճար, իսկ նույն տարվա ընթացքում երկրորդ և ավելի անգամ գրավոր տեղեկատվություն տրամադրելն անձի համար կլինի վճարովի:

Աշխատողի այլ գործատուի մոտ աշխատանքի փոխադրվելու (գործատուի փոփոխության) դեպքում, աշխատողի կողմից եկամտային հարկ և սոցիալական վճար կատարելու (հարկային գործակալի) պարտականությունը կատարելու է նոր գործատուն: Այդ աշխատողի համար հարկային մարմնում անհատական նոր հաշիվ չի բացվի, այլ ստացված տեղեկատվությունը կմուտքագրվի աշխատողի արդեն իսկ բացված անհատական հաշվին:

Հարց 36.

***Մասնակցի համար սոցիալական վճարումները
չկատարելու կամ ուշացումով կատարելու դեպքում, տույժեր
սահմանվում են, թե՛ ոչ:***

«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը հստակորեն սահմանում է սոցիալական վճար կատարելու պարտավորություն ունեցող անձինք պատասխանատվություն են կրում կուտակային վճարները չկատարելու կամ ուշացումով կատարելու համար:

Ըստ այդմ,

1) վարձու աշխատողների համար սոցիալական վճարումները չկատարելու կամ ուշացումով կատարելու համար տույժը վճարում է գործատուն (բացառությամբ՝ երբ գործատուն ազատված է հարկային գործակալի պարտականություններից),

2) անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի, հարկային գործակալի պարտականություններից ազատված գործատուի վարձու աշխատողի համար սոցիալական վճարները չկատարելու կամ ուշացումով կատարելու համար տույժը վճարում է ինքը՝ մասնակիցը,

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մասնակիցը, որպես ինքնազբաղված անձ, ստացված եկամուտներից սոցիալական վճար կատարում է կամավորության սկզբունքով՝ սոցիալական վճարները չկատարելու կամ ուշացումով կատարելու համար, տույժեր չեն հաշվարկվում:

Սոցիալական վճարները սահմանված ժամկետում չկատարելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար սոցիալական վճարը հաշվարկելու և փոխանցելու պարտավորություն ունեցող անձը (մասնակիցը, հարկային գործակալը կամ գործատուն) վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված սոցիալական վճարի գումարի 0.15%-ի չափով:

Հարց 37.

***Եթե լինեն ծրագրային կամ որևէ այլ տեխնիկական
խնդիրներ և սոցիալական վճարի գումարը ուշ փոխանցվի
տույժեր կլինե՞ն:***

Ծրագրային համակարգերը մոդելավորված են այնպես, որ գրեթե բացառվում է ծրագրային խափանումների ռիսկը: Այնուհանդերձ, նման ֆորսմաժորային իրավիճակներ առաջանալու և ծրագրային

խափանումների կամ տեխնիկական որևէ այլ պատճառով գումարները ուշ փոխանցելու դեպքում, գործատուները պատասխանատվության չեն ենթարկվի, քանի որ ուշացումները նրանց մեղքով չեն եղել:

Հարց 38.

Որքա՞ն կարող է գումարը մնալ կամուրջ հաշվում:

Անձի գումարը կամուրջ հաշվում կարող է մնալ առավելագույնը 10 օր, որն անհրաժեշտ է հարկային մարմնի տարածքային տեսչությունների և սոցիալական վճարների վերաբերյալ տեղեկությունները մշակելու համար: Եթե ներկայացված տեղեկություններում չկան սխալներ և կամուրջ հաշվին մուտքագրվել են հաշվետվության մեջ նշված սոցիալական վճարները, հարկային մարմինը վճարման հանձնարարականներ է ուղարկում գանձապետարան՝ կամուրջ հաշվին մուտքագրված գումարներից և ՀՀ պետական բյուջեից համապատասխան գումարները մասնակիցների ռեեստր վարողին փոխանցելու համար:

Հարց 39.

Կուտակային միջոցները ենթակա՞ են արդյոք բռնագանձման անձի՝ ֆինանսական պարտավորությունների դիմաց:

Ոչ, մասնակցի կենսաթոշակային կուտակումներն անձեռնմխելի են, ուստի ֆինանսական պարտավորությունների դիմաց դրանց վրա բռնագանձում չի կարող տարածվել՝ մինչև նրա կենսաթոշակային տարիքը լրանալը:

Հարց 40.

Կուտակային կենսաթոշակի ո՞ր տոկոսը կարող է ենթակա լինել հարկադիր գանձման, եթե կենսաթոշակի անցնելուց հետո կենսաթոշակառուն ունի ֆինանսական պարտավորություններ:

Կուտակային կենսաթոշակից պահումներ (հարկադիր բռնագանձումներ) կարող են կատարվել, եթե կենսաթոշակառուն ունի ժամկետանց պարտավորություններ, սակայն կան նաև սահմանափակումներ, որոնք թույլ չեն տալիս ամբողջ կենսաթոշակը տրամադրել պարտքերի մար-

մանը, անձին թողնելով՝ առանց կենսաթոշակային միջոցների: Օրենքով սահմանված կարգով, կենսաթոշակից կատարվող հարկադիր պահումների ընդհանուր գումարը չպետք է գերազանցի կենսաթոշակի 30 տոկոսը:

Յարդ 41.

Ի՞նչ կարող է լինել քաղաքացիների կուտակած ակտիվների հետ տնտեսական ճգնաժամի դեպքում:

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի ներդրումային ռիսկը կրում է մասնակիցը: Այսինքն՝ ներդրումների արժեքի փոփոխություններն ուղղակիորեն ավելացնում կամ նվազեցնում են մասնակցի կուտակումների արժեքը: Տնտեսական ճգնաժամերի դեպքում, որպես կանոն, տեղի է ունենում ներդրումների արժեքի անկում, որն արտահայտվում է անձանց խնայողությունների վրա:

Վերջին համաշխարհային տնտեսական ճգնաժամի տարիներին մի շարք երկրների պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի արժեքը նվազեց, սակայն այդ կորուստն արդեն վերականգնվել է: Այստեղ կարևոր դեր է խաղում կենսաթոշակային միջոցների ներդրման երկարաժամկետ հորիզոնը:

ՈՐՏԵ՞Ղ ԵՆ ԿՈՒՏԱԿԿԵԼՈՒ ՄԵՐ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հարց 42.

Ի՞նչ է պարտադիր կենսաթոշակային ֆոնդը:

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդն իրենից ներկայացնում է անձանց կողմից կատարված վճարների և դրանց ներդրման հաշվին ձևավորված ակտիվների ամբողջություն: Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի դեպքում անձինք իրենց դրամական միջոցները (սոցիալական վճարները) տրամադրում են պրոֆեսիոնալ կառավարչին, որը նշված միջոցները միավորում և կառավարում է որպես մեկ միասնական պորտֆել: Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների, դրանցից ստացված եկամուտների նկատմամբ յուրաքանչյուր մասնակցի իրավունքը հավաստվում է պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայով:

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդն ունի իր գործունեության կանոնները, որոնք սահմանում են, թե ինչպես է կառավարվելու տվյալ ֆոնդը, որտեղ են ներդրվելու ֆոնդի միջոցները, ինչպես են գնահատվելու ֆոնդի ակտիվները, ինչպիսի վճարներ են գանձվելու, դրանց չափերն ու հաշվարկման կարգը և այլ էական պայմաններ: Ֆոնդի կանոնները սահմանում է այդ ֆոնդի կառավարիչը, որոնք գրանցվում են Կենտրոնական բանկի կողմից և հրապարակվում են:

Մասնակիցներին պարտադիր կենսաթոշակային ֆոնդից վճարումները կատարվում են (վերադարձվում են ֆոնդի ակտիվներում մասնակցի փային համապատասխանող դրամական միջոցները) կենսաթոշակի ձևով՝ մասնակցի կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո:

Հարց 43.

Կառավարիչներն ինչպիսի՞ պարտադիր կենսաթոշակային ֆոնդեր են առաջարկում սոցիալական վճարների ներդրման համար:

Կառավարիչներից յուրաքանչյուրն առաջարկում է պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի երեք տեսակ՝ կայուն եկամտային, պահպանողական և հավասարակշռված:

Կայուն եկամտային ֆոնդը համեմատաբար ցածր ռիսկային է և ապահովում է կայուն, ոչ բարձր եկամուտ: Ֆոնդի միջոցներն ամբողջու-

թյամբ՝ 100%-ով, ներդրվում են կայուն եկամուտ ապահովող և ցածր ռիսկային ֆինանսական գործիքներում (օրինակ՝ ավանդ, պարտատոմս և այլն): Այս ֆոնդերը նախընտրելի են այն մասնակիցների համար, ովքեր հակված չեն ռիսկի և գերադասում են ստանալ թեկուզ ոչ բարձր, բայց կայուն եկամուտ:

Պահպանողական ֆոնդ միջին ռիսկային է և կարող է ապահովել համեմատաբար բարձր եկամուտ: Ֆոնդի միջոցները, բացի կայուն եկամուտ ապահովող ֆինանսական գործիքներից, որոշ չափով (մինչև 25%) ներդրվում են համեմատաբար ռիսկային ֆինանսական գործիքներում՝ բաժնետոմսերում: Այս ֆոնդերը նախընտրելի են այն մասնակիցների համար, ովքեր հիմնականում հակված են բարձր եկամուտ ստանալու և պատրաստ են դիմելու նաև որոշակի ռիսկի:

Հավասարակշռված ֆոնդը համեմատաբար բարձր ռիսկային է և կարող է ապահովել ավելի բարձր եկամուտ: Ֆոնդի միջոցները, բացի կայուն եկամուտ ապահովող ֆինանսական գործիքներից, կարող են մինչև 50%-ի չափով ներդրվել ռիսկային ֆինանսական գործիքներում: Այս ֆոնդերը նախընտրելի են այն մասնակիցների համար, ովքեր հակված են դիմելու ռիսկի՝ ավելի բարձր եկամուտ ստանալու համար:

Հարց 44.

Կարող է արդյոք անձը մասնակիցների ռեեստրը վարողի մոտ ունենալ միաժամանակ տարբեր հաշիվներ:

Ոչ, չի կարող: Մասնակիցների ռեեստրը վարողի մոտ յուրաքանչյուր անձի համար վարվում է մեկ կենսաթոշակային հաշիվ, որտեղ արտացոլվում է տեղեկատվություն՝ անձի ունեցած փայերի և դրանց արժեքի, նրա ընտրած ֆոնդի կառավարչի և ֆոնդի վերաբերյալ:

Հարց 45.

Ի՞նչ է պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայը:

Ֆոնդում մասնակցությունը հավաստվում է ֆոնդի փայով կամ ֆոնդի բաժնետոմսով: Ֆոնդի փայը արժեթուղթ է, որը հավաստում է համապատասխան կենսաթոշակային ֆոնդում մասնակցի փայամասնակցության իրավունքը (մասնակիցը հանդիսանում է կենսաթոշակային ֆոնդի փայատեր):

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերը պետությունը ձեռք է բերում սոցիալական վճար կատարող անձանց համար (օգտին): Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերը պետության կողմից դրանց ձեռք բերման պահից հանդիսանում են մասնակցի սեփականությունը՝ քանի դեռ մասնակիցը չի ներկայացրել պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի սեփականությունից հրաժարվելու վերաբերյալ դիմում:

Այսինքն, մասնակցի լուրջությունը (պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի սեփականությունից հրաժարվելու վերաբերյալ դիմում չներկայացնելը) համարվում է մասնակցի կողմից կենսաթոշակային ֆոնդի փայերի սեփականությունն ընդունելու կամքի արտահայտություն (պետության կողմից հոգուտ իրեն կնքված և կնքվելիք կենսաթոշակային ֆոնդի փայերի ձեռք բերման պայմանագրերով իր իրավունքից օգտվելու ցանկության հայտնում): Մասնակիցը ցանկացած ժամանակ կարող է հրաժարվել կենսաթոշակային ֆոնդի փայերի սեփականությունից՝ այդ մասին գրավոր դիմում ներկայացնելով մասնակիցների ռեեստրը վարողին:

Կենսաթոշակային ֆոնդի փայերի սեփականությունից հրաժարվելու իրավունքից անձը կարող է օգտվել միայն մեկ անգամ:

Եթե մասնակիցը ներկայացնում է կենսաթոշակային ֆոնդի փայերից հրաժարվելու վերաբերյալ դիմում, ապա կենսաթոշակային ֆոնդի փայերն անցնում են պետության սեփականությանը:

Սակայն այս դեպքում, պետությունը շարունակում է օրենքով սահմանված կարգով տվյալ անձի համար (օգտին) կուտակային հատկացումների փոխանցումը, որոնց դիմաց ձեռք բերված կենսաթոշակային ֆոնդի փայերը հանդիսանում են պետության սեփականությունը և հաշվառվում են տվյալ անձի անունով բացված կենսաթոշակային հաշվում:

Չարդ 46.

Ի՞նչ է պարտադիր կենսաթոշակային ֆոնդի պահառուն և ի՞նչ գործառույթներ է իրականացնում:

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի պահառուն ֆոնդի կառավարչից անկախ (չփոխկապակցված) իրավաբանական անձ է, որն իրականացնում է պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների պահառությունը, այսինքն՝ ակտիվների պահպանությունը և առանձնացված հաշվառումը: Ընդ որում, ֆոնդի ակտիվներով գործարքները (միջոցների

ելքն ու մուտքը) կարող են իրականացվել միայն պահառուի համաձայնությամբ: Այս առումով, պահառուն ունի կառավարչի նկատմամբ հսկողական իրավասություններ: Այսինքն՝ պահառուն հսկում է կառավարչի կողմից օրենսդրությամբ և ֆոնդի կանոններով սահմանված պահանջների կատարումը և չի կատարում կառավարչի հանձնարարականները, եթե դրանց հետևանքով խախտվում են օրենսդրության կամ ֆոնդի կանոնների պահանջները:

Հարկ է նշել, որ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի պահառու կարող են լինել միայն բանկերը: Սակայն անցումային շրջանում, այսինքն՝ մինչև բանկերի կողմից պահառուի գործառույթի իրականացման համար անհրաժեշտ կարողությունների ձևավորումը, օրենքը նախատեսում է, որ բոլոր պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի համար պահառուի գործառույթն իրականացնելու է Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիան (ՀԿԴ)՝ որպես կենտրոնացված պահառու:

Հարց 47.

Կարո՞ղ է արդյոք պարտադիր կենսաթոշակային ֆոնդը սնանկանալ:

Ոչ: Պարտադիր կենսաթոշակային ֆոնդը չի կարող սնանկանալ, քանի որ այն չի համարվում իրավաբանական անձ: Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի սնանկացումը չի նշանակում պարտադիր կենսաթոշակային ֆոնդի սնանկացում: Կառավարչի սնանկության դեպքում կենսաթոշակային ակտիվները չեն վտանգվում, քանի որ դրանք հանդիսանում են մասնակիցների սեփականությունը և կառավարչի գույքի մաս չեն կազմում: Կառավարչի սնանկության դեպքում դրանք շարունակում են առանձնացված հաշվառվել ֆոնդի պահառուի կողմից, որն էլ՝ օրենքով սահմանված ժամկետում, ֆոնդը փոխանցում է այլ կառավարչի:

Հարց 48.

Մասնակիցը կարո՞ղ է ընտրել կոնկրետ ներդրման եղանակը կամ որոշել իր միջոցների ներդրման քաղաքականությունը:

Մասնակիցը չի կարող ուղղակիորեն որոշել իր միջոցների ներդրման քաղաքականությունը: Սակայն, քանի որ յուրաքանչյուր պար-

տաղիր կենսաթոշակային ֆոնդ կառավարվում է ֆոնդի կառավարչի կողմից նախապես հաստատված և հրապարակված ներդրումային քաղաքականությամբ, ապա յուրաքանչյուր մասնակից կարող է ընտրել իր համար նախընտրելի ներդրումային քաղաքականությունը՝ այս կամ այն կառավարչի այս կամ այն պարտադիր կենսաթոշակային ֆոնդն ընտրելու միջոցով: Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի թույլատրելի ներդրումները և ներդրումների սահմանափակումները սահմանվում են «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով:

Ո՞Վ Ե ԿԱՌԱՎԱՐԵԼՈՒ ՄԵՐ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հարց 49.

Ի՞նչ դերակատարություն կարող է ունենալ անձն իր կենսաթոշակային ակտիվների կառավարման գործում:

Անձն ինքն է ընտրում այն պարտադիր կենսաթոշակային ֆոնդը և ֆոնդի կառավարչին, որը կառավարելու է իր կուտակային կենսաթոշակային միջոցները: Անձը կարող է փոխել պարտադիր կենսաթոշակային ֆոնդը և ֆոնդի կառավարչին, ինչպես նաև միաժամանակ իր ակտիվները ներդնել մի քանի պարտադիր կենսաթոշակային ֆոնդերում: Օրինակ, նախկինում կուտակված միջոցները թողնել պարտադիր կենսաթոշակային ֆոնդում, իսկ ապագա կուտակային միջոցները կառավարման հանձնել մեկ այլ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի:

Մասնակիցը կարող է ցանկացած պահի փոխել պարտադիր կենսաթոշակային ֆոնդը, ընտրելով՝ նույն կառավարչի այլ ֆոնդ կամ այլ կառավարչի որևէ ֆոնդ: Ֆոնդի կառավարչի կամ ֆոնդի փոփոխությունը տարեկան մեկ անգամ կատարվելու է անվճար, իսկ դրանից հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին ֆոնդի կառավարչի կամ ֆոնդի փոփոխության դեպքում, կառավարիչը կարող է գանձել փայերի մարման վճար:

Ընտրության ազատությունը նպաստելու է ֆոնդերի կառավարիչների պատասխանատվության աճին և առողջ մրցակցությանը:

Սկզբնական շրջանում ընտրության ժամանակ անձին խորհուրդ է տրվում տեղեկատվություն ստանալ ֆոնդերի կառավարիչների և ղեկավարների վերաբերյալ (ինտերնետային կայքեր, թողարկված գրքույկներ), այնուհետև պարզել այն վճարները, որոնք գանձվում են ծառայությունների համար, քանի որ տարբեր ֆոնդերի դեպքում դրանք կարող են եւայես տարբերվել, ինչպես նաև ծանոթանալ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կանոններին:

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ընտրության կարևորագույն չափանիշներից մեկը կառավարման արդյունքում ստացված եկամտաբերությունն է, որի վերաբերյալ տեղեկությունները յուրաքանչյուր ֆոնդի կառավարիչ պարտավոր է պարբերաբար հրապարակել:

Հարց 50.

Ո՞վ և ինչպե՞ս է կառավարելու կենսաթոշակային ակտիվները:

Կենսաթոշակային ակտիվները կառավարվելու են կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կողմից: Արդյունքում, բացի կատարված կուտակային վճարները, մասնակիցները կունենան նաև կենսաթոշակային ակտիվների ներդրումներից ստացված լրացուցիչ եկամուտներ:

Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը վարձատրվում է ֆոնդի կառավարման ծառայությունների դիմաց: Վարձավճարի չափը սահմանվում է տվյալ ֆոնդի կանոններով և չի կարող գերազանցել օրենքով սահմանված մեծությունը՝ կառավարման ներքո գտնվող զուտ ակտիվների արժեքի 1,5 տոկոսը:

Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ կարող է լինել բաժնետիրական կամ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կարգավիճակ ունեցող կազմակերպություն, որը սահմանված կարգով ՀՀ կենտրոնական բանկից ստացել է պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարման լիցենզիա:

Հարց 51.

Ի՞նչ է դիվերսիֆիկացիան:

Դիվերսիֆիկացիան կամ տարատեսականագումը ռիսկերի նվազեցումն է տարբեր ակտիվներում միաժամանակյա ներդրման միջոցով:

Ֆոնդի բոլոր միջոցները մեկ ընկերության բաժնետոմսերում ներդնելու դեպքում ռիսկը շատ մեծ է, քանի որ այդ բաժնետոմսերի գները կարող են նվազել, օրինակ, 30 տոկոսով: Ավելի քիչ հավանական է, որ 30 տարբեր ընկերությունների բաժնետոմսերը միաժամանակ նվազեն նույն չափով: Ավելին, եթե այդ ընկերությունները տարբեր չափեր ունեն, աշխատում են տարբեր ոլորտներում, ապա դրանց բաժնետոմսերից կազմված պորտֆելի ռիսկը շատ ավելի ցածր կլինի: Դիվերսիֆիկացիայի ավելի մեծ էֆեկտի կարելի է հասնել, ներդնելով՝ նաև այլ երկրներում գործող ընկերությունների բաժնետոմսերում, կամ տարբեր տեսակի ակտիվներում՝ պարտատոմսեր, բաժնետոմսեր, բանկային ավանդներ և այլն:

Դիվերսիֆիկացիայի արդյունքում կարելի է նվազագույնի հասցնել պորտֆելի ընդհանուր ռիսկը, քանի որ մի ակտիվի գնի

նվազումը կարող է փոխհատուցվել պորտֆելում ներառված մեկ այլ ակտիվի գնի բարձրացմամբ: Պորտֆելի ընդհանուր եկամտաբերությունը կլինի ավելի ցածր, քան դրանում ներառված ամենաեկամտաբեր ակտիվինը, բայց և պորտֆելի ընդհանուր ռիսկը կլինի ավելի ցածր, քան դրանում ներառված ամենառիսկային ակտիվինը:

Հարց 52.

Անձն ի՞նչ աղբյուրներից կարող է տեղեկատվություն ստանալ ֆոնդի կառավարիչների մասին:

Անձը կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների մասին սպառիչ տեղեկատվություն կարող է ստանալ յուրաքանչյուր կառավարչի ինտերնետային կայքից, որը պարունակում է նրա և նրա կողմից կառավարվող պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը՝

- առնվազն վերջին տարեկան և վերջին եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները,
- տարեկան հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացությունները,
- պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների կազմի և կառուցվածքի վերաբերյալ,
- պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի եկամտաբերության վերաբերյալ,
- շահութաբաժիններ վճարելու վերաբերյալ որոշումների մասին,
- կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց մասին,
- կառավարչի ղեկավարների մասին:

Ֆոնդերի կառավարիչների կայքերում տեղակայված տեղեկատվությունը ստուգվում և վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից, որի նպատակն է բացառել անարժանահավատ և ապակողմնորոշող տեղեկատվության տարածումը:

Հարց 53.

Ի՞նչ չափանիշներով և ընթացակարգով են ընտրվում պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչները Կենտրոնական բանկի կողմից:

Կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների ընտրության չափանիշները և ընթացակարգերը սահմանված են «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 116-Ն որոշմամբ հաստատված Կանոնակարգ 10/01-ով:

Մասնավորապես, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարման թույլտվություն կարող է տրամադրվել ՀՀ տարածքում ստեղծված այն կառավարչին, որն ունի միջազգային ֆինանսական կազմակերպություն կամ կենսաթոշակային ֆոնդերի (սմանատիպ այլ ներդրումային ֆոնդերի) կառավարման մեջ մասնագիտացված օտարերկրյա հեղինակավոր կազմակերպություն հանդիսացող առնվազն մեկ մասնակից (բաժնետեր): Այդպիսի միջազգային ֆինանսական կազմակերպության և/կամ օտարերկրյա հեղինակավոր կազմակերպության (կազմակերպությունների) ձայնի իրավունք տվող մասնակցությունը պետք է կազմի 50 տոկոսից ավելին, և այդ կազմակերպությունը (կազմակերպությունները) պետք է ունենա որոշիչ ձայն կենսաթոշակային ֆոնդի կառավարչի ռազմավարությունը սահմանելիս, ինչպես նաև կառավարչի գործադիր մարմինը և ներքին հսկողության համակարգը ձևավորելիս: Ընդ որում, ՀՀ կենտրոնական բանկը՝ վերը նշված օտարերկրյա կազմակերպության հեղինակավոր լինելը գնահատելիս, հաշվի է առնում հետևյալ հանգամանքները.

1) միջազգային հեղինակավոր վարկանշող կազմակերպությունների կողմից կազմակերպությանը շնորհված վարկանիշը,

2) ֆինանսական ոլորտում միջազգային համբավ ունեցող վերլուծական և (կամ) խորհրդատվական կազմակերպությունների կողմից հրապարակվող լավագույն կառավարիչների ցանկում ընդգրկվածությունը,

3) կառավարման ներքո գտնվող ակտիվների մեծությունը,

4) կառավարվող ֆոնդերի եկամտաբերությունը,

5) աշխարհի տարբեր երկրներում ներկայացվածության աստիճանը,

6) կազմակերպության բաժնետոմսերը Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կամ Եվրոպական Միության անդամ պետությունների կապիտալի շուկան վերահսկող լիազորված

մարմնի կողմից գրանցված և վերահսկվող կարգավորվող շուկաներում առևտրին թույլատրված լինելը,

7) կազմակերպության կողմից կենսաթոշակային ֆոնդերի կամ նմանատիպ (ըստ ներդրումային քաղաքականության) այլ ֆոնդերի կառավարման բնագավառում փորձը,

8) այլ էական հանգամանքներ:

Չայաստանում պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կառավարման թույլտվություն ստացել են երկու ընկերություններ՝ «ԱՄՈՒՆԴԻԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՉՄԵՆԹ» ՓԲԸ-ը և «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ-ը: Կառավարիչներից յուրաքանչյուրն առաջարկում է երեք տեսակի պարտադիր կենսաթոշակային ֆոնդ՝ կայուն եկամտային, պահպանողական և հավասարակշռված:

Չարդ 54.

Ի՞նչ կլինի, եթե կուտակային բաղադրիչի մասնակիցը կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կամ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ընտրություն չկատարի:

Եթե մասնակիցն ընտրել է միայն կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ, ապա նրա համար կատարված սոցիալական վճարներն ուղղվում են իր ընտրած կառավարչի պահպանողական ֆոնդ:

Եթե մասնակիցն ընդհանրապես ընտրություն չի կատարել, ապա մասնակիցների ռեեստրը վարողը՝ հարկային մարմնից ստացված սոցիալական վճարների վերաբերյալ անհատական տեղեկատվության հիման վրա, ընտրություն չկատարած մասնակցի համար բացում է կենսաթոշակային հաշիվ: Կենսաթոշակային հաշիվ բացելուց հետո, 30 օրվա ընթացքում ֆոնդի ընտրություն չկատարելու դեպքում, անձի համար պարտադիր կենսաթոշակային ֆոնդն ընտրվում է մասնակիցների ռեեստրը վարողի կողմից, ծրագրային մոդուլի միջոցով՝ պատահականության սկզբունքով:

Այնուհետև, 10 աշխատանքային օրվա ընթացքում մասնակիցների ռեեստրը վարողը գրավոր (թղթային) ձևով տեղեկացնում է մասնակցին նրա համար կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ և պարտադիր կենսաթոշակային ֆոնդ ընտրելու վերաբերյալ: Չտաճայում՝ ցանկության դեպքում, մասնակիցը կարող է փոխել պարտադիր կենսաթոշակային ֆոնդը:

Հարց 55.

Ինչպե՞ս ընտրել ֆոնդի կառավարիչ:

Մասնակիցը կարող է ընտրել կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ և ֆոնդ՝ երկու եղանակով:

1. www.epension.am կայքի ԻՄ ՅԱԾԻՎԸ ինտերնետային էջի միջոցով: Դրա համար անհրաժեշտ է ունենալ նույնականացման քարտ, քարտ կարդացող սարք և ակտիվացված էլեկտրոնային ստորագրություն:

2. Հաշվի օպերատորների միջոցով, ներկայացնելով՝ անձնագիր և հանրային ծառայության համարանիշ կամ դրա բացակայության մասին տեղեկանք, կամ միայն նույնականացման քարտ:

Հարց 56.

Ովքե՞ր կարող են լինել հաշվի օպերատորներ:

Հաշվի օպերատորներ կարող են լինել Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերը, ներդրումային ընկերությունները և փոստային կապի ազգային օպերատորը (Հայփոստ ՓԲԸ): Ներկայումս՝ Մասնակիցների ռեեստրի հետ կնքված պայմանագրի համաձայն, հաշվի օպերատորի գործառույթներ իրականացնում են՝

«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ,

«ԱՐԴԵԻՆԻՎԵՍԲԱՆԿ» ՓԲԸ,

«Էյչ Էս Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ,

«ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ,

«ՀԱՅՓՈՍ» ՓԲԸ,

«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ

«Ինեկոբանկ» ՓԲԸ

«Կոնվերս բանկ» ՓԲԸ:

Հարց 57.

Չնարավո՞ր է փոխել ընտրված ֆոնդը և կենսաթոշակային ֆոնդի կառավարչին:

Մասնակիցը կարող է փոխել պարտադիր կենսաթոշակային ֆոնդը և ֆոնդի կառավարչին կամ ցանկացած պահի ընտրել նոր ֆոնդ և ֆոնդի կառավարիչ՝ հետագա սոցիալական վճարներն ուղղելով այդ ֆոնդին:

Մասնակիցները 2014 թվականի ընթացքում չեն կարող փոխել կենսաթոշակային ֆոնդը և կառավարչին:

2015 թվականից սկսած, տարին մեկ անգամ՝ անվճար, դրանից հետո՝ որոշակի վճարի դիմաց (որը չի կարող գերազանցել գումարի տեղափոխման հետ կապված ծախսերը), մասնակիցը կարող է ցանկացած պահի փոխել ֆոնդը և կառավարչին:

Նույն կառավարչի մոտ ֆոնդերի փոփոխությունն անվճար է և առանց սահամանափակումների:

Հարց 58.

Ե՞րբ և ինչպե՞ս կարելի է փոխել մասնակցիների ռեեստր վարողի կողմից ընտրված կառավարչին:

Մասնակիցները 2014 թվականի ընթացքում չեն կարող փոխել մասնակցիների ռեեստր վարողի կողմից ընտրված պարտադիր կենսաթոշակային ֆոնդը և կառավարչին: 2015 թվականից սկսած, տարին մեկ անգամ՝ անվճար, դրանից հետո՝ որոշակի վճարի դիմաց (որը չի կարող գերազանցել գումարի տեղափոխման հետ կապված ծախսերը), ցանկացած պահի հնարավոր է փոխել ֆոնդը և կառավարչին: Հնարավոր երկու եղանակներն են՝

1. www.epension.am կայքի ԻՄ ՀԱԾԻՎԸ համակարգում, որի համար հարկավոր է ունենալ նույնականացման քարտ, քարտը կարդացող սարք և ակտիվացված էլեկտրոնային ստորագրություն:

2. Հաշվի օպերատորի միջոցով, որի կարգավիճակը ներկա պահին ունեն՝ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ն, «ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԲԸ-ն, «ԷՅԷ Ես Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն, «ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն, «ՀԱՅՓՈՍՍ» ՓԲԸ-ն, «ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆԲԱՆԿ» ՓԲԸ-ն, «Ինեկորբանկ» ՓԲԸ-ն, «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ն:

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդը և կառավարչին փոխելու համար անհրաժեշտ է ներկայացնել անձնագիր և հանրային ծառայության համարանիշ կամ դրա բացակայության մասին տեղեկանք, կամ միայն նույնականացման քարտ:

Հարց 59.

Կարո՞ղ են արդյոք անձի կուտակային հատկացումները միաժամանակ ուղղվել տարբեր ֆոնդերի կառավարիչների, կամ նույն կառավարչի երկու տարբեր ֆոնդեր:

Անձը չի կարող միաժամանակ իր սոցիալական վճարներն ուղղել երկու տարբեր ֆոնդերի (այսինքն, չի կարող տվյալ ամսվա կուտակային վճարի մի մասն ուղղել մի ֆոնդի, իսկ մյուս մասը՝ այլ ֆոնդի):

Բայց անձը կարող է ընտրել նոր ֆոնդ, նոր ընտրած ֆոնդին փոխանցելով նաև նախկին կուտակումները, կամ նոր ընտրած ֆոնդին փոխանցելով միայն հետագա սոցիալական վճարները:

Հարց 60.

Որքա՞ն է կազմում ֆոնդերի կառավարիչների ծառայության արժեքը:

Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչն՝ իր կողմից կառավարվող պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կանոններով, սահմանում է տվյալ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարման համար տարեկան պարգևավճարը և դրա հաշվարկման կարգը:

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարման տարեկան պարգևավճարի չափը, ըստ՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի, չպետք է գերազանցի տվյալ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի զուտ ակտիվների արժեքի 1.5 %:

Ներկայումս ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված կառավարիչները սահմանել են կառավարման հետևյալ պարգևավճարները.

«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԱՐՄԵՆԻԱ» ընկերությունը՝

ԱՍՈՒՆԴԻ-ԱԿԲԱ Կայուն Եկամտային (հապավումը համակարգում՝ AMFIX) – ֆոնդի կառավարման վճարը կազմում է ֆոնդի զուտ ակտիվների արժեքի 1%-ը,

ԱՍՈՒՆԴԻ-ԱԿԲԱ Պահպանողական (հապավումը համակարգում՝ AMCON) - ֆոնդի կառավարման վճարը կազմում է ֆոնդի զուտ ակտիվների արժեքի 1.1%-ը,

ԱՍՈՒՆԴԻ-ԱԿԲԱ Հավասարակշռված (հապավումը համակարգում՝ AMBAL) - ֆոնդի կառավարման վճարը կազմում է ֆոնդի զուտ ակտիվների արժեքի 1.3%-ը:

«ՑԵ-ԿԱԴԴՐԱՏ ԱՄՊԵԳԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԱՐՄԵՆԻԱ» ընկերությունը՝

ՑԵ-Կվադրատ Ամպեգա Կայուն Եկամտային (հապավումը համակարգում՝ CQFIX) - ֆոնդի կառավարման վճարը կազմում է ֆոնդի զուտ ակտիվների արժեքի 1%-ը,

ՑԵ-Կվադրատ Ամպեգա Պահպանողական (հապավումը համակարգում՝ CQCON) - ֆոնդի կառավարման վճարը կազմում է ֆոնդի զուտ ակտիվների արժեքի 1.1%-ը,

ՑԵ-Կվադրատ Ամպեգա Հավասարակշռված (հապավումը համակարգում՝ CQBAL) - ֆոնդի կառավարման վճարը կազմում է ֆոնդի զուտ ակտիվների արժեքի 1.3%-ը:

Հարց 61.

Ու՞մ կողմից է վերահսկվում կենսաթոշակային ֆոնդի կառավարչի և պահառուի գործունեությունը:

Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի և պահառուի գործունեությունը կարգավորում և վերահսկում է ՀՀ Կեստրոնական բանկը:

Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտավոր է հրապարակել, ինչպես նաև իր ինտերնետային կայքում տեղադրել ընկերության ֆինանսական հաշվետվությունները և աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը:

Հարց 62.

Չնարավո՞ր է արդյոք ակտիվների կառավարիչների փոփոխություն:

Այո, ակտիվներին կառավարիչները կարող են փոփոխվել, ավելանալ կամ պակասել, քանի որ օրենքով սահմանված չէ ակտիվների կառավարիչների առավելագույն կամ նվազագույն քանակ: Բարեխիղճ մրցակցություն ապահովելու տեսակետից, իհարկիե, ցանկալի է, որ ակտիվների կառավարիչները լինեն առնվազն երկուսը: Ակտիվների նոր կառավարչի մուտքը շուկա հնարավոր է նույն ընթացակարգով՝ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորման ճանապարհով:

Հարց 63.

Ինչպե՞ս կապաշտպանվեն մասնակցի կուտակային միջոցները, եթե \$ոնդի կառավարիչը լուծարվի կամ որոշի չգբաղվել կենսաթոշակային \$ոնդի կառավարչի գործունեությամբ:

Կենսաթոշակային \$ոնդի կառավարիչը կարող է լուծարվել ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ստանալու դեպքում: Կենսաթոշակային \$ոնդի կառավարչի լուծարման կամ այլ հիմքերով գործունեության դադարեցման դեպքում \$ոնդի կառավարումը փոխանցվում է այլ կառավարչի: Կառավարչի լուծարման դեպքում մասնակիցների կուտակային միջոցները չեն վտանգվում, քանի որ դրանք հանդիսանում են մասնակիցների սեփականությունը, ոչ թե՝ կառավարչի: \$ոնդի կառավարումը փոխանցելու գործընթացը կարգավորվում է «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով և վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

Հարց 64.

Ինչպե՞ս կարելի է հետևել \$ոնդերի եկամտաբերությանը:

Կառավարիչը իր կողմից կառավարվող յուրաքանչյուր \$ոնդի համար, յուրաքանչյուր աշխատանքային օր հրապարակում է \$ոնդի եկամտաբերության վերաբերյալ ցուցանիշներն՝ իր ինտերնետային կայքում:

Հարց 65.

Որտե՞ղ կարող են ներդրվել կուտակային կենսաթոշակային ակտիվները:

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի ներդրման սկզբունքներն են՝

- Կենսաթոշակային ակտիվների ապահովություն և եկամտաբերություն,
- Ռիսկերի դիվերսիֆիկացիա,
- Համարժեք իրացվելիության ապահովում:

«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը սահմանում է, թե պարտադիր կենսաթոշակային ֆոնդերն ինչպիսի՞ ֆինանսական գործիքներում և ո՞ր երկրներում կարող են ներդրվել («Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք, Գլուխ 8):

Հարց 66.

Կա՞ն արդյոք պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի միջոցների ներդրման սահմանափակումներ:

«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի հոդված 38-ով և հոդված 39-ով սահմանված են պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների թույլատրելի ներդրումները և սահմանափակումները:

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվները չեն կարող ներդրվել՝

- տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի և պահառուի, ինչպես նաև դրանց հետ փոխկապակցված անձանց թողարկած արժեթղթերում,
- տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կամ պահառուի առևտրի իրականացնող անձի թողարկած արժեթղթերում,
- տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչին կամ պահառուին խորհրդատվական ծառայություններ մատուցող անձանց թողարկած արժեթղթերում,
- ածանցյալ գործիքներում, բացառությամբ՝ հեջավորման նպատակով ներդրումների,

- այն ակտիվներում, որոնց օտարումն արգելված կամ սահմանափակված է,
- անշարժ գույքում կամ այլ ֆիզիկական ակտիվներում (արվեստի գործեր, հուշադրամներ, սրբապատկերներ, հնաոճ ապրանքներ, թանկարժեք մեքենաներ և այլն):

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվներում ներառված արժեթղթերը չեն կարող կարգավորվող շուկայից դուրս վաճառվել կամ ցանկացած այլ ձևով օտարվել՝

- տվյալ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի պահառուին,
- տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչին,
- տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կամ պահառուի կառավարման մարմնի անդամներին,
- և այլ փոխկապակցված անձանց:

Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը և պահառուն չեն կարող մեկը մյուսին տրամադրել փոխառություններ կամ երաշխավորել պարտավորությունների կատարումը:

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտավոր է համապատասխանեցնել պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ներդրումները օրենքի պահանջներին, և ապահովել հնարավոր առավելագույն շահութաբերություն, պահել ու խնայել պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվները: Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտավոր է նաև իրականացնել ֆոնդի ակտիվներում ներառված արժեթղթերով ամրագրված իրավունքները, ելնելով՝ բացառապես մասնակիցների շահերից:

Հարց 67.

Ինչո՞ւ այդ գումարների տնօրինումը պետությունը չի վերցնում իր վրա՝ ՀՀ-ում ներդնելու, տնտեսությունը զարգացնելու ու նոր աշխատատեղեր ստեղծելու նպատակների համար:

Ֆոնդերի կառավարումը լիցենզավորվող պրոֆեսիոնալ գործունեություն է, որն իրականացվում է ֆոնդերի կառավարման անհրաժեշտ կարողություններ ունեցող կազմակերպությունների կողմից: Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի

միջոցների տնօրինումը պետության կողմից արդյունավետ չէ մի շարք պատճառներով.

- Պետության մասնակցությամբ պարտադիր կենսաթոշակային ֆոնդերը համարվում են ամենաբարձր ադմինիստրատիվ ծախսեր ունեցող ֆոնդեր: Իսկ բարձր ադմինիստրատիվ ծախսերը հանգեցնում են բարձր կառավարման վճարների, որոնք երկար ժամկետում էապես նվազեցնում են մասնակցի կուտակումները:
- Պետության մասնակցությամբ պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի դեպքում անկա է այն ռիսկը, որ ֆոնդերի ներդրումները ծառայեցվում են կառավարության սոցիալական և քաղաքական նպատակներին, երկրորդային պլան մղելով եկամտաբեր շուկայական նախագծերում ներդրումների միջոցով մասնակիցների կենսաթոշակային խնայողությունների աճի նպատակը:
- Այն երկրներում, որտեղ պետությունը մրցել է մասնավորի հետ, պետական ֆոնդերը մասնավորին զիջել են իրենց արդյունավետությամբ: Ավելին, դրանք հիմնականում չեն ապահովել նույնիսկ գևաճը գերազանցող եկամտաբերություն:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ պետությունը, որպես կանոն, չի մասնակցում պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կառավարմանը: Նույնիսկ այն երկրներում, որտեղ պետությունը մասնակցում է այդ գործընթացին, դրանում ներգրավված են նաև մասնավոր կառավարիչներ:

Պետք է հաշվի առնել, որ պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների գերակշիռ մասը ներդրվելու է Հայաստանի տնտեսությունում, որը խթանելու է երկարաժամկետ և խոշորամասշտաբ ներդրումային նախագծերի իրականացումը և աշխատատեղերի ստեղծումը: Ընդ որում, պետությունը նույնպես կարող է ներգրավել կենսաթոշակային խնայողությունների մի մասը՝ պետական արժեթղթերի թողարկման միջոցով:

ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հարց 68.

Ինչպե՞ս է հաշվարկվելու մինչև 1974թ. ծնված անձանց պետական կենսաթոշակը:

Մինչև 1974թ. ծնված անձինք կենսաթոշակ են ստանալու բաշխողական կենսաթոշակային բաղադրիչից: Նրանց կենսաթոշակները հաշվարկվելու են ներկայումս «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված բանաձևով (տես՝ հարց 8): Մինչև 1974թ. ծնվածները կարող են կամավորության սկզբունքով մասնակցել կուտակային կամ կամավոր կենսաթոշակային բաղադրիչներին և, ի լրումն պետական կենսաթոշակի, ստանալ կուտակային կամ կամավոր կենսաթոշակ:

Ընդ որում, 1964թ. հունվարի 1-ից մինչև 1974թ. հունվարի 1-ը ծնված անձանց կուտակային բաղադրիչին կամավոր միանալու դեպքում, պետությունը նրանց համար Նույնպես կկատարի լրացուցիչ հատկացումներ՝ ընդհանուր հիմունքներով (կրկնապատկելով սոցիալական վճարները):

Հարց 69

ՀՀ կառավարությունն արդյոք սահմանելու՞ է կուտակային կենսաթոշակի չափը:

Ոչ: ՀՀ կառավարությունը չի սահմանում կուտակային կենսաթոշակի չափը, քանի որ կուտակային կենսաթոշակի չափը կախված է և վճարվում է միմիայն աշխատանքային գործունեության ընթացքում անձի կուտակած միջոցներից՝ սոցիալական վճարներից և պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի փայերի կառավարումից ստացված եկամուտներից:

Հարց 70.

Կուտակային բաղադրիչի մասնակիցը (1974 թվականի հունվարի 1-ից հետո ծնված անձը) ստանալու՞ է կենսաթոշակ բաշխողական կենսաթոշակային բաղադրիչից:

Այո: Կուտակային բաղադրիչի մասնակիցը՝ ընդհանուր հիմունքներով, կենսաթոշակ է ստանալու նաև պետական բաշխողական համակարգից (տես՝ հարց 2):

Հարց 71.

Ինչպե՞ս է հաշվարկվելու կուտակային բաղադրիչի մասնակցի պետական կենսաթոշակը:

Կուտակային բաղադրիչի մասնակցի պետական կենսաթոշակի չափը հաշվարկվելու է ընդհանուր հիմունքներով, հաշվի առնելով՝ հիմնական կենսաթոշակի չափը, աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը և աշխատանքային ստաժի տևողությունը:

Կուտակային բաղադրիչի մասնակցի՝ (1974 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված անձանց) աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկելիս, աշխատանքային ստաժում հաշվառվում են մինչև 2014 թվականի հունվարի 1-ն ընկած աշխատանքային ստաժը, բացառությամբ՝ կենսաթոշակառուի անձնական գործակիցը հաշվարկելու դեպքի:

Օրինակ, եթե անձն ունի ընդհանուր առմամբ 30 տարվա աշխատանքային ստաժ, որից 12 տարին կուտակել է մինչև 2014թ, ապա՝ կենսաթոշակի անցնելիս, նա պետական բաղադրիչից փոխհատուցում կստանա 12 տարվա աշխատանքային ստաժի տարիների համար:

Հարց 72.

Ե՞րբ է կուտակային բաղադրիչի մասնակիցը ձեռք բերում կուտակային կենսաթոշակ ստանալու իրավունք:

Մասնակիցը կուտակային կենսաթոշակ ստանալու իրավունք ձեռք է բերում, եթե՝

1) Լրացել է մասնակցի կենսաթոշակային տարիքը (63 տարին),

2) Լրացել է մասնակցի 55 տարին, և նրա կենսաթոշակային հաշվում առկա կենսաթոշակային ֆոնդերի փայերի ընդհանուր հաշվարկային արժեքը այնքան է, որ հավասարաչափ ամսական վճարների վերածելիս (ըստ կյանքի սպասվող միջին տևողության տարիների) ամսական գումարը կազմի ոչ պակաս հիմնական կենսաթոշակի 5-ապատիկից:

Հարց 73.

Ու՞մ պետք է դիմի անձը կուտակային կենսաթոշակ ստանալու համար:

Կուտակային կենսաթոշակը ստանալու համար անձը պետք է դիմի մասնակիցների ռեեստրը վարողին, պարզելու համար՝ իր անհատական հաշվում առկա պարտադիր կուտակային միջոցների չափը և, ըստ այդմ, ընտրելու կենսաթոշակի ստացման ձևը՝ միանվագ վճար, անուիտետ, ծրագրային վճար:

Հարց 74.

Կուտակային բաղադրիչի մասնակիցը ի՞նչ եղանակով կարող է ստանալ իր կուտակային կենսաթոշակը:

Կուտակային կենսաթոշակի ստացման ձևը կախված է մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա միջոցների չափից: Կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո մասնակիցը կարող է իր կուտակային կենսաթոշակը ստանալ հետևյալ 3 ձևերով՝

- անուիտետ,
- միանվագ վճար,
- ծրագրային վճար:

Հարց 75.

Ի՞նչ է անուիտետը և ո՞ր դեպքում է այն պարտադիր:

Անուիտետը միանվագ փոխանցված գումարի դիմաց ապահովագրական ընկերության կողմից անձին որոշակի ժամանակահատվածում և պարբերականությամբ վճարվող գումարն է: Անուիտետի դեպքում պայմանագիր է կնքվում անձի և ապահովագրական ընկերության միջև, որին էլ փոխանցվում են մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա միջոցները:

Եթե անձի կուտակային միջոցների ամսական գումարը՝ հավասարաչափ ամսական վճարների վերածելու դեպքում, մեծ է հիմնական կենսաթոշակի 75 տոկոսից, ապա մասնակիցը պարտավոր է ընտրել որևէ ապահովագրական ընկերություն և նրա հետ կնքել անուիտետի պայմանագիր:

Այդ նպատակով, մասնակիցը պետք է մասնակիցների ռեեստրը վարողին ներկայացնի դիմում («Իմ հաշիվը» ինտերնետային էջի կամ հաշվի օպերատորի միջոցով):

Մասնակիցների ռեեստրը վարողը պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում անձի անհատական հաշվում առկա պարտադիր կուտակային միջոցները փոխանցել ընտրված ապահովագրական ընկերությանը: Ապահովագրական ընկերությունը պարտավոր է իր հետ պայմանագիր կնքած մասնակցին գրավոր տեղեկացնել դրամական միջոցների ստացման և դրանց չափի մասին, ստանալու օրվան հաջորդող 7 օրվա ընթացքում:

Կուտակային միջոցները ստանալուց հետո՝ անուիտետի պայմանագրով սահմանված կարգով, ժամկետներում և պայմաններով, ապահովագրական ընկերությունը կսկսի անուիտետի վճարումը:

Հարց 76.

Անուիտետի ի՞նչ տեսակներ գոյություն ունեն:

Օրենքով նախատեսված են անուիտետի հետևյալ երկու տեսակները.

1. 10 կամ 5 տարով երաշխավորված անուիտետ և
2. ամուսինների անուիտետ, 10 կամ 5 տարի երաշխավորված ժամկետով:

10 կամ 5 տարով երաշխավորված անուիտետը վճարվում է ցմահ, սակայն, եթե անձը մահանում է նախքան 10 կամ 5 տարի երաշխավորված ժամանակահատվածի լրանալը, ապա ժառանգներն իրավունք ունեն ապահովագրական ընկերությունից հետ ստանալ անուիտետի մնացորդային գումարը:

Ամուսինների անուիտետը վճարվում է անձին ցմահ՝ հօգուտ որի այն նշանակվել է: Անձի մահից հետո անուիտետը շարունակվում է վճարվել վերջինիս ողջ մնացած ամուսնուն՝ ցմահ, անուիտետի պայմանագրում նախատեսված գումարի չափով: Եթե ամուսիններից երկուսն էլ մահանում են երաշխավորված ժամկետում, նրանց ժառանգները ստանում են չվճարված անուիտետի մնացորդային գումարը:

Հարց 77.

Որո՞նք են անուհիտեոտի պայմանագրի էական պայմանները:

Ապահովագրական ընկերության հետ անուհիտեոտի պայմանագիր կնքելիս դրանում նշվում են անուհիտեոտի տեսակը, մասնակցի՝ կենսաթոշակառուի տարիքը, ապահովագրական ընկերությանը միանվագ փոխանցված գումարի չափը, վճարման ենթակա անուհիտեոտի չափը, ժամկետը և վճարման պարբերականությունը, ապահովագրական ընկերության պատասխանատվությունը պայմանագիրը խախտելու համար և այլ էական պայմաններ:

Հարց 78.

Կարո՞ղ է արդյոք անձը լուծել անուհիտեոտի պայմանագիրը և անուհիտեոտի պայմանագիր կնքել մեկ այլ ապահովագրական ընկերության հետ:

Այո, եթե ապահովագրական ընկերությունը թույլ է տվել անուհիտեոտի պայմանագրի խախտումներ: Ապահովագրական ընկերության կողմից երկու անգամ անընդմեջ անուհիտեոտ չվճարելու դեպքում, կենսաթոշակառուն իրավունք ունի իր նախաձեռնությամբ լուծելու անուհիտեոտի պայմանագիրը, պահանջելով՝ պատճառված վնասների փոխհատուցում և մնացորդային գումարի վերադարձ: Անուհիտեոտի մնացորդային գումարն անձին չի տրամադրվի միանվագ վճարի տեսքով: Նա պարտավոր է անուհիտեոտի պայմանագիր կնքել մեկ այլ ապահովագրական ընկերության հետ, որի հաշվին էլ կփոխանցվի անուհիտեոտի մնացորդային գումարը:

Ապահովագրական ընկերության սնանկության դեպքում անուհիտեոտի հետագա վճարման հարցը կկարգավորվի ապահովագրական ընկերությունների մասին օրենքով: Մասնավորապես, ապահովագրական ընկերության ամբողջ պորտֆելը՝ ՀՀ Կենտրոնական բանկի թույլտվությամբ, կփոխանցվի այլ ապահովագրական ընկերության, որն էլ՝ համարվելով իրավահաջորդ, կշարունակի վճարել անուհիտեոտ՝ պայմանագրով նախատեսված չափով և կարգով:

Հարց 79.

Ինչպե՞ս կոնսորիսվեն կուտակային միջոցները անձի՝ անուխտեոտի ստացման փուլում, մահվան դեպքում:

Անուխտեոտի ստացման փուլում անձի մահվան դեպքում, կուտակային միջոցները կմնան ապահովագրական ընկերությունում, եթե անձը մահացել է անուխտեոտի վճարման երաշխիքային ժամկետից հետո: Եթե անձը մահանա նախքան անուխտեոտի պայմանագրով նախատեսված երաշխիքային ժամկետը լրանալը, ապա ապահովագրական ընկերությունը պարտավոր է հաշվարկել և անձի ժառանգներին վերադարձնել երաշխիքային ժամկետի չստացած տարիների մնացորդային գումարը:

Հարց 80.

Ի՞նչ է ծրագրային վճարը և որո՞նք են դրա վճարման հիմքերը:

Ծրագրային վճարը մասնակցի կենսաթոշակային հաշվում կուտակված միջոցների հաշվին ամսական կտրվածքով վճարվող կենսաթոշակ է, որը բաշխված է ըստ կյանքի սպասվող միջին տևողության ամիսների:

Օրենքով սահմանված են կուտակային կենսաթոշակը ծրագրային վճարի ձևով ստանալու հետևյալ պայմանը: Եթե մասնակցի կուտակային միջոցները՝ հավասարաչափ ամսական վճարների վերածելու դեպքում, ամսական գումարը փոքր է հիմնական կենսաթոշակի 75 տոկոսից կամ հավասար է դրան, ապա մասնակիցն իրավունք ունի կուտակային կենսաթոշակը ստանալ ծրագրային վճարների ձևով:

Հարց 81.

Ի՞նչ է միանվագ վճարը և որո՞նք են դրա վճարման հիմքերը:

Միանվագ վճարը՝ կուտակային կենսաթոշակը ստանալու իրավունք ձեռք բերելուց հետո (տես հարց 72), անձի կենսաթոշակային հաշվում առկա միջոցները (կամ դրանց մի մասը) ամբողջապես մասնակցին միանգամից վճարելն է:

Եթե մասնակցի՝ կուտակային միջոցները հավասարաչափ ամսական վճարների վերածելու դեպքում, ամսական գումարը փոքր է

հիմնական կենսաթոշակի 75 տոկոսից կամ հավասար է դրան, ապա մասնակիցն իրավունք ունի կուտակած միջոցները ստանալ միանվագ վճարների ձևով: Բացի դրանից, եթե մասնակցի՝ կուտակային միջոցները հավասարաչափ ամսական վճարների վերածելու դեպքում, ամսական գումարը գերազանցում է հիմնական կենսաթոշակի հնգապատիկը, ապա մասնակիցը պարտավոր է կնքել անուիտետի պայմանագիր այն գումարի չափով, որը ամսական վճարների վերածելու դեպքում ամսական գումարը կկազմի հիմնական կենսաթոշակի հնգապատիկը, իսկ մնացած մասը նա իրավունք ունի ստանալ իր նախընտրած ձևով (անուիտետի կամ ծրագրային վճարների կամ միանվագ վճարի ձևով):

Բացի վերը նշվածը, կենսաթոշակային հաշվում առկա միջոցները միանվագ վճարի ձևով վճարվում են նաև՝

- մասնակցի, նախքան կենսաթոշակային տարիքը լրանալն, աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության երրորդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ ճանաչվելու դեպքում,
- մասնակցի ծայրահեղ ծանր վիճակում գտնվելու և կենսական կարևոր օրգանների անբուժելի ախտահարումով հիվանդ լինելու դեպքում:

Յարդ 82.

Կոդաբեյթի՞ արդյոք կուտակային կենսաթոշակի վճարումը, եթե քաղաքացին ժամանակավոր բացակայի կամ մշտապես բնակվի Յայաստանի Յանրապետությունից դուրս:

Ոչ: Յայաստանից ժամանակավորապես բացակայելու կամ Յայաստանից ընդմիշտ մեկնելու դեպքում կուտակային կենսաթոշակի վճարումը չի դադարեցվելու: Անձն իր կուտակային կենսաթոշակը կստանա անկախ Յայաստանում գտնվելու հանգամանքից: Անձը կարող է լիազորել այլ անձանց իր փոխարեն ստանալ կուտակային կենսաթոշակը կամ մասնակիցների ռեեստրը վարողին, ապահովագրական ընկերությանը հայտնել իր բանկային հաշվի տվյալները (այդ թվում՝ օտարերկրյա բանկում), որին կփոխանցվի կուտակային կենսաթոշակի գումարը: Կենսաթոշակառուն կվճարի բանկային հաշվին կուտակային կենսաթոշակի գումարը փոխանցելու հետ կապված ծախսերը:

Ի՞նչ երաշխիքներ կան մասնակցի կենսաթոշակային կուտակումների վերադարձի համար:

Անհատական հաշիվներում կուտակված կենսաթոշակային միջոցները յուրաքանչյուր մասնակցի անձնական սեփականությունն են, որոնք թափանցիկ են, վերահսկելի և կառավարելի հաշվետիրոջ համար: Կառավարող ընկերության լուծարման կամ սնանկության դեպքում ֆոնդի միջոցները չեն վտանգվում, քանի որ ֆոնդը չի հանդիսանում կառավարչի սեփականությունը և հասանելի չէ կառավարչի բաժնետերերի կամ պարտատերերի համար: Այդպիսի դեպքերում տվյալ ֆոնդերի կառավարումը փոխանցվում է Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված մեկ այլ կառավարչի:

Բացի այդ, օրենսդրությունը և դրա հիման վրա ստեղծված բազմաթիվ մեխանիզմները, ենթակառուցվածքներն ուղղված են երաշխիքների մի ամբողջ համակարգի ստեղծմանը, որը երաշխավորում է կուտակված միջոցների վերադարձելիությունը կենսաթոշակի անցնելուց հետո: Մասնավորապես, անհատական հաշվառման էլեկտրոնային համակարգերը (որոնք նվազեցնում են համակարգի գործառնական ռիսկերը), ակտիվների տարանջատման օրենսդրական պահանջները (որոնք բացառում են մասնակիցների միջոցների միախառնումն այլ անձանց միջոցների հետ և ապահովագրում այդ անձանց սնանկացման ռիսկից), ներդրումների դիվերսիֆիկացիայի պահանջները (որոնք ապահովագրում են մասնակիցների միջոցների կորուստի ռիսկից), անկախ պահառուի ինստիտուտը (որն իրականացնում է հսկողություն՝ ֆոնդի ակտիվների ներդրման և կառավարչի գործունեության նկատմամբ), անկախ աուդիտի պահանջները, Կենտրոնական բանկի կողմից ամենօրյա վերահսկողությունը և այլն:

Բացի վերը նշվածներից, մասնակիցը կենսաթոշակի անցնելուց հետո կստանա ամսվազն իր կուտակված միջոցները՝ ճշգրտված տարեկան գնաճով, ինչը թույլ չի տա այդ տարիների ընթացքում կենսաթոշակային հաշվում կուտակված գումարների արժեզրկումը:

Հարց 84.

Ինպե՞ս է կատարվելու մասնակիցների կողմից կատարված սոցիալական վճարների՝ տարեկան գնաճով ճշգրտումը:

Մասնակցի կողմից սոցիալական վճարներ կատարելու ամբողջ ժամանակահատվածի կատարված սոցիալական վճարների՝ գնաճով ճշգրտումը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ԿՎ_{գնաճով ճշգրտված ընդհանուր} = \sum_{n=1}^N \left[\frac{ԿՎ_n * \prod_{m=n}^{N-1} (1+i_m)}{m=n} \right],$$

որտեղ՝

1) $ԿՎ_{գնաճով ճշգրտված ընդհանուր}$ -ը մասնակցի կողմից սոցիալական վճարներ կատարելու ամբողջ ժամանակահատվածի համար նրա կատարած սոցիալական վճարների՝ գնաճով ճշգրտված մեծությունն է.

2) N -ը մասնակցի կողմից սոցիալական վճարներ կատարելու տարիների թիվն է.

3) $ԿՎ_n$ -ն n -րդ տարվա ընթացքում մասնակցի կատարած սոցիալական վճարների գումարն է՝ տարեվերջի դրությամբ.

4) i_n -ն n -րդ տարվան համապատասխանող տարվա տարեկան միջին գնաճի տեմպի պաշտոնական ցուցանիշն է՝ արտահայտված միավորի մասերով: Ընդ որում, n -ը փոփոխվում է տարիների հետընթաց հաշվարկով:

Եշված բանաձևում մասնակցի կողմից օրենքի համապատասխան կարգով կուտակային կենսաթոշակ ստանալու մասին դիմում ներկայացվելու տարվա համար կատարված սոցիալական վճարը գնաճով չի ճշգրտվում: Այն դեպքում, երբ մասնակցի կատարած սոցիալական վճարների գնաճով ճշգրտման ժամանակ դեռևս առկա չէ տվյալ տարվա տարեկան միջին գնաճի տեմպի պաշտոնական ցուցանիշը, ապա հիմք է ընդունվում նախորդ տարվա տարեկան միջին գնաճի տեմպի պաշտոնական ցուցանիշը:

Տարեկան միջին գնաճի տեմպի պաշտոնական ցուցանիշ է համարվում Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության հրապարակած գնաճի միջին ցուցանիշը տվյալ տարվա համար:

Հարց 85.

Ինչպիսի՞ն կլինի կենսաթոշակի փոխհատուցման գործակիցը կուտակային բաղադրիչից կենսաթոշակ ստանալու պարագայում:

Ընդհանրապես կուտակային կենսաթոշակային բաղադրիչից ստացվող կենսաթոշակի չափը, հետևաբար, նաև կենսաթոշակի փոխհատուցման գործակիցը պայմանավորված է հետևյալ գործոններով.

- Որքան երկար է մասնակիցը աշխատում և որքան հաճախ է կատարում սոցիալական վճարումներ,
- Սոցիալական վճարների դրույքաչափը և աշխատավարձի չափը, որից կատարվում են հատկացումները,
- Կառավարիչների կողմից սոցիալական վճարների կառավարման արդյունավետությունը (եկամտաբերությունը):

Կենսաթոշակային բարեփոխումների նպատակն է՝ պետական կենսաթոշակի հետ, ապահովել անձին միջին աշխատավարձի առնվազն 45-50 տոկոսը կազմող կենսաթոշակով: Բնականաբար, այդ գործակիցը կախված է պարտադիր կուտակային համակարգին միանալու պահին անձի տարիքից, որքան ավելի երիտասարդ տարիներից նա սկսի կուտակել, գործակիցն այնքան մեծ կլինի, և հակառակը՝ փոքր կլինի, եթե մարդը սկսում է կուտակել կենսաթոշակայինին մոտ տարիքից:

Հարց 86.

Ինչպե՞ս են ձևավորվելու երաշխիքային հիմնադրամի միջոցները:

Կուտակային խնայողությունների վերադարձը երաշխավորող երաշխիքային հիմնադրամի միջոցները ձևավորվելու են պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների կատարած միանվագ վճարներից, ֆոնդի ակտիվներից կատարված պարբերական վճարներից (տարեկան՝ ակտիվների 0,02 տոկոսի չափով), դրանց կառավարումից ստացված եկամուտներից և օրենքով սահմանված այլ աղբյուրներից:

ՄԻՆՉԵՎ 63 ՏԱՐԵԿԱՆ ԼՐԱՆԱԼԸ ԿԱՄ ԴՐԱՆԻՑ ՅԵՏՈ ԱՌԱՆՁԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Չափ 87.

Ո՞ր դեպքերում կարելի է մինչև 63 տարին լրանալը ստանալ կուտակային միջոցները:

«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով նախատեսված է 3 դեպք, երբ հնարավոր է նախքան 63 տարեկանը լրանալը միանվագ և ամբողջությամբ ստանալ կուտակային միջոցները: Դրանք են՝

1) մասնակիցն օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել է աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության երրորդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ:

2) մասնակիցն առողջական ծայրահեղ ծանր վիճակում է և հիվանդ է կենսական կարևոր օրգանների անբուժելի ախտահարումներով, որը հավաստվում է առողջապահության բնագավառում ՀՀ կառավարության լիազոր մարմնի տված եզրակացությամբ:

3) ՀՀ-ում աշխատող օտարերկրացի մասնակիցը վերադառնում է իր մշտական բնակության երկիր:

4) լրացել է մասնակցի 55 տարին, և նրա կենսաթոշակային հաշվում ամկա կենսաթոշակային ֆոնդերի փայերի ընդհանուր հաշվարկային արժեքը այնքան է, որ հավասարաչափ ամսական վճարների վերածելիս (ըստ կյանքի սպասվող միջին տևողության տարիների) ամսական գումարը կազմի ոչ պակաս հիմնական կենսաթոշակի 5-ապատիկից:

Վերը նշված 3-րդ կետով նախատեսված հիմքով, մինչև կենսաթոշակային տարիքը մասնակցի պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերը մարվելու դեպքում, առաջացած միջոցները փոխանցվում են համապատասխան օտարերկրյա պետությունում նրա անդամակցած կուտակային կենսաթոշակային համակարգին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և պայմաններով:

Եթե համապատասխան օտարերկրյա պետությունում անձը չի մասնակցում կուտակային կենսաթոշակային համակարգին, ապա նա իր

միջոցները կարող է ստանալ ընդհանուր հիմունքներով, բացառապես կուտակային կենսաթոշակ ստանալու իրավունք ձեռք բերելուց հետո:

Չարդ 88.

Ի՞նչ կլինի անձի պարտադիր կուտակային խնայողությունների հետ աշխատանքը կորցնելու դեպքում:

Աշխատանքը կորցնելու և այլևս եկամուտներ չունենալու դեպքում, անձի պարտադիր կուտակային միջոցները կմնան անձի անհատական կենսաթոշակային հաշվին և կշարունակեն կառավարվել կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կողմից: Աշխատանք չունենալու ամբողջ ժամանակահատվածում անձի անհատական կենսաթոշակային հաշվին սոցիալական վճարները չեն կատարվի և կենսաթոշակային հաշվի ավելացման միակ աղբյուրը կլինի պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի կառավարումից ստացված եկամուտները: Նորից աշխատանքի անցնելու դեպքում սոցիալական վճարները կրկին կսկսեն մուտքագրվել անձի անհատական կենսաթոշակային հաշվին ու դրանց հաշվին ձեռք կբերվեն պարտադիր կենսաթոշակային ֆոնդի նոր փայեր:

Չարդ 89.

Անձը՝ մինչև կենսաթոշակային տարիքը, կորցրել է աշխատանքը, արդյոք, նա իրավունք ունի՞ ստանալ իր կուտակային կենսաթոշակը՝ մինչև 63 տարեկան դառնալը:

Աշխատանքը կորցնելը բավարար իրավական հիմք չէ նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը կուտակային կենսաթոշակը ստանալու համար: Միայն 63 տարին լրանալու դեպքում այդ անձը՝ սահմանված կարգով, կարող է դիմել կուտակային կենսաթոշակ ստանալու համար (մինչև 63 տարեկանը կենսաթոշակային կուտակումների ստացման դեպքերը, տե՛ս Չարդ 87):

Անձը կարող է ստանալ իր կուտակային կենսաթոշակը 55 տարեկանից հետո, եթե նրա կենսաթոշակային հաշվում առկա կենսաթոշակային ֆոնդերի փայերի ընդհանուր հաշվարկային արժեքը լինի այնքան, որ հավասարաչափ ամսական վճարների վերածելիս (ըստ կյանքի սպասվող միջին տևողության տարիների) ամսական գումարը կազմի ոչ պակաս հիմնական կենսաթոշակի 5-ապատիկից:

Հարց 90.

Անձի կենսաթոշակային տարիքը լրացել է, սակայն նա շարունակում է աշխատել և չի ստանում իր կուտակային կենսաթոշակը, արդյոք նա պարտավո՞ր է կատարել սոցիալական վճարներ:

Սոցիալական վճար կատարելու պարտավորությունը պահպանվում է մինչև անձի կենսաթոշակային տարիքը (63 տարին) լրանալը:

63 տարեկանը լրանալուց հետո, մասնակիցը՝ սոցիալական վճար կատարելը դադարեցնելու համար, պետք է հարկային մարմին ներկայացնի համապատասխան դիմում: Սոցիալական վճար կատարելը դադարեցնելու դիմումը հարկային մարմին է ներկայացվում գործատուի միջոցով:

Մասնակցի կողմից սոցիալական վճար կատարելը դադարեցվում է (անկախ մասնակցի ցանկությունից), եթե մասնակիցը ներկայացնում է դիմում կուտակային կենսաթոշակ ստանալու վերաբերյալ:

Եթե մասնակիցը չի ներկայացնում սոցիալական վճար կատարելը դադարեցնելու դիմում կամ կուտակային կենսաթոշակ ստանալու դիմում, ապա, կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո, սոցիալական վճարի դրույթաչափը սահմանվում է բազային եկամտի 5 %-ի չափով, իսկ մասնակցի համար (օգտին) պետական բյուջեից կուտակային վճարումներ չեն կատարվում:

Հարց 91.

Ինչպե՞ս և ում կողմից կարող են տնօրինվել անձի կուտակային միջոցները, եթե նա մահանում է մինչև 63 տարին լրանալը:

Մինչև կենսաթոշակային տարիքը՝ 63 տարին լրանալը, անձի մահվան դեպքում պարտադիր կուտակային միջոցները ժառանգության կարգով փոխանցվում են անձի ժառանգներին:

Վերջինների ընտրությամբ՝ մասնակցի կենսաթոշակային միջոցները կարող են փոխանցվել նրանց կենսաթոշակային հաշիվներին կամ, դիմումի համաձայն, ամբողջությամբ վճարվել միանվագ վճարի տեսքով:

Հարց 92.

Ինչպե՞ս և ում կողմից կարող են տնօրինվել անձի կուտակային միջոցները, եթե նա մահանում է մինչև 63 տարին լրանալը և չունի ժառանգներ:

Անձի՝ մինչև 63 տարին լրանալը, մահվան դեպքում կուտակային միջոցները կմնան պարտադիր կենսաթոշակային ֆոնդում և 3 տարի կկառավարվեն ֆոնդի կառավարչի կողմից: 3 տարվա ընթացքում ժառանգներ ի հայտ չգալու և փայերը չժառանգելու դեպքում, կուտակային միջոցները՝ սահմանված կարգով, կճանաչվեն անժառանգ և կփոխանցվեն ՀՀ պետական բյուջե:

Հարց 93.

Հնարավո՞ր է արդյոք կենսաթոշակային խնայողությունները նախապես ժառանգել (կտակել) մի քանի ժառանգների միջև, այսինքն՝ բաշխել ամբողջ գումարը մի քանի հոգու միջև:

Քանի որ կենսաթոշակային խնայողությունները համարվում են անձի անձնական սեփականությունը, ապա մասնակիցն իրավունք ունի կտակել դրանք իր հայեցողությամբ: Այստեղ գործելու են ժառանգության և կտակի վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կանոնները:

Հարց 94.

Եթե անձի ժառանգը օտարերկրյա քաղաքացի է, ինչպե՞ս է նա ստանալու գումարը:

Օտարերկրյա քաղաքացիության հանգամանքը որևէ կերպ չի սահմանափակում անձի ժառանգության իրավունքները կուտակային քաղաքացիության:

Ժառանգի ընտրությամբ՝ մասնակցի կենսաթոշակային միջոցները կարող են փոխանցվել նրանց կենսաթոշակային հաշվին կամ, դիմումի համաձայն, ամբողջությամբ վճարվել միանվագ վճարի տեսքով:

Հարց 95.

Ի՞նչ է լինում, եթե ժառանգությունը ստացող անձը գինժառայող է:

Նախ նշենք, որ կուտակային կենսաթոշակային ակտիվների ժառանգման հետ կապված հարաբերությունները՝ ինչպես այդ ակտիվների կուտակման, այնպես էլ դրանց կենսաթոշակի վերածելու փուլում, կարգավորվում են «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքով և ՀՀ քաղաքացիական օրենսգրքով:

Կուտակային բաղադրիչի մասնակցի՝ կենսաթոշակային ակտիվների կուտակման փուլում, մահվան դեպքում նրա կենսաթոշակային միջոցները, ժառանգի ընտրությամբ, կարող են դիմումի համաձայն ամբողջությամբ վճարվել միանվագ վճարի տեսքով կամ փոխանցվել նրանց կենսաթոշակային հաշվին:

Եթե մասնակիցը մահացել է կուտակային կենսաթոշակային խնայողությունների վճարման, այն է՝ կենսաթոշակի տեսքով ստանալու փուլում, ապա ժառանգման ենթակա կենսաթոշակը ժառանգներին փոխանցվում է օրենքով սահմանված կարգով:

Հարց 96.

Անձը հաշմանդամ է դարձել նախքան 63 տարին լրանալը, արդյոք նա իրավունք ունի՞ ստանալ իր կուտակային կենսաթոշակը:

Եթե անձն ունի աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում, ապա նա իրավունք ունի իր կուտակային միջոցներն ստանալ միանվագ վճարի տեսքով՝ նախքան 63 տարին լրանալը:

Իհարկե, վերը նշվածը չի նշանակում, որ անձը չի ունենալու պետական կենսաթոշակային բաշխողական բաղադրիչից հաշմանդամության կենսաթոշակ ստանալու իրավունք: Սահմանված կարգով հաշմանդամ ճանաչվելու դեպքում անձը պետական կենսաթոշակային բաղադրիչից կստանա իրեն նշանակված հաշմանդամության կենսաթոշակը:

Հարց 97.

Իրավունք ունի՞, արդյոք, անձը՝ նախքան 63 տարին լրանալը, միանվագ կարգով ստանալ իր պարտադիր կուտակային միջոցները:

Որոշակի բացառիկ հիմքերի առկայության դեպքում, անձն իրավունք կունենա նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը ստանալ իր կուտակային կենսաթոշակային միջոցները (տես հարց 87):

Հարց 98.

Ի՞նչ իրավունքներ ունեն ամուսինները՝ մեկը մյուսի կուտակային միջոցների (կենսաթոշակային ֆոնդի փայերի) նկատմամբ, ամուսնալուծության դեպքում:

Ամուսինների կուտակային կենսաթոշակային միջոցները (կենսաթոշակային ֆոնդի փայերը) համարվում են նրանցից յուրաքանչյուրի անձնական սեփականությունը, այսինքն՝ դրանց նկատմամբ չի տարածվում ամուսինների համատեղ կյանքի ընթացքում ձեռք բերված սեփականության ռեժիմը: Ամուսնալուծության դեպքում ամուսիններից որևէ մեկը չի կարող հավակնություններ ունենալ ամուսնու պարտադիր կուտակային միջոցների նկատմամբ:

Հարց 99.

Մինչև կենսաթոշակային տարիքը լրանալը, կարո՞ղ է արդյոք անձի գույքային պարտավորությունների համար դատական կարգով բռնագանձում տարածվել կուտակային միջոցների (կենսաթոշակային ֆոնդի փայերի) վրա:

Ոչ: Մինչև անձի 63 տարին լրանալն անձի գույքային պարտավորությունների համար կուտակային միջոցների նկատմամբ բռնագանձում տարածվել չի կարող: Այսինքն, եթե անձն ունի գույքային պարտավորություններ՝ բանկի կամ որևէ այլ անձի հանդեպ և չունի բավարար գույք իր պարտավորությունները կատարելու համար, ապա միևնույն է՝ նրա կուտակային միջոցների վրա բռնագանձում չի կարող տարածվել:

Անձի գույքային պարտավորությունների համար դատական կարգով բռնագանձում կարող է տարածվել կուտակային կենսաթոշակի

վրա՝ 63 տարեկան դառնալուց հետո, կուտակային կենսաթոշակը ստանալու փուլում:

Հարց 100.

Իրավունք ունի՞ անձը՝ 63 տարին լրանալու դեպքում ստանալ միայն պետական կենսաթոշակ և անորոշ ժամանակով հետաձգել կուտակային կենսաթոշակի ստացումը:

Այո: 63 տարին լրանալու դեպքում անձը կարող է ստանալ իր պետական կենսաթոշակը և անորոշ ժամանակով հետաձգել կուտակային կենսաթոշակի ստացումը: Անձի մահվան դեպքում, չստացված կուտակային կենսաթոշակային միջոցները կժառանգվեն սահմանված կարգով:

ՈՐՏԵ՞Ղ Ե ԶԱՎԱՔԱԳՐՎԵԼՈՒ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Չափ 101.

Ո՞վ է մասնակիցների ռեեստր վարողը:

Կուտակային բաղադրիչի մասնակիցների ռեեստր վարողը կազմակերպություն է, որը գործում է ՀՀ կառավարության հետ կնքված պայմանագրի հիման վրա: Մասնակիցների ռեեստրը վարում է Չայաստանի կենտրոնական դեպոզիտարիան, որն իրականացնում է հետևյալ գործառնությունները՝

- բացում և վարում է մասնակիցների կենսաթոշակային հաշիվները,
- կազմակերպում է պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի փայերի թողարկումը և մարումը,
- մասնակիցների կուտակային ակտիվները փոխանցում է կենսաթոշակային ֆոնդի կառավարչին՝ առանց բացահայտելու ընտրությունն կատարած մասնակիցներին,
- կենսաթոշակային ակտիվները փոխանցում է մեկ կենսաթոշակային ֆոնդի կառավարչից մյուսին՝ մասնակցի ցանկության դեպքում (դիմումի հիման վրա),
- տեղեկատվություն է տրամադրում մասնակիցներին՝ կենսաթոշակային հաշիվների վերաբերյալ,
- պահառուի հետ համատեղ միանվագ և ծրագրային վճարների կատարումը,
- կենսաթոշակային ակտիվների փոխանցումը ապահովագրական ընկերությանը,
- մահացած մասնակցի փայերի փոխանցումը մահացածի ժառանգներին:

Հարց 102.

Ինչպե՞ս է ապահովվելու մասնակիցների ռեեստրը վարողի և մասնակիցների միջև կապը:

Մասնակիցների ռեեստրը վարողը (Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա) չունի ստորաբաժանումներ (գրասենյակներ) և ուղղակիորեն մասնակցին ծառայություններ չի մատուցում:

Կենտրոնական դեպոզիտարիայի և կուտակային բաղադրիչի մասնակիցների միջև կապն իրականացվում է մասնակիցների ռեեստրը վարողի կայքէջի միջոցով կամ հաշվի օպերատորների միջոցով:

Հաշվի օպերատորը, փաստորեն, միջնորդավորում է մասնակիցների ռեեստրը վարողի կողմից մասնակիցներին մատուցվող ծառայությունները:

Հաշվի օպերատորի գործառույթ իրականացնող կազմակերպությունների մասին տես 56-րդ հարցը:

Հարց 103.

Ի՞նչ է կենսաթոշակային հաշիվը և ինչպե՞ս է այն բացվում:

Կուտակային բաղադրիչի յուրաքանչյուր մասնակցի համար մասնակիցների ռեեստրը վարողի մոտ բացվում է անհատական կենսաթոշակային հաշիվ, որտեղ արտացոլվում են մասնակցին պատկանող պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի, այդ փայերի հաշվարկային արժեքի, մասնակցի օգտին կատարված սոցիալական վճարների վերաբերյալ տեղեկությունները:

Կենսաթոշակային հաշիվը բացվում է.

1) անձի կատարած սոցիալական վճարների վերաբերյալ հարկային մարմնի կողմից մասնակիցների ռեեստրը վարողին ներկայացված տեղեկատվության հիման վրա,

2) մասնակիցների ռեեստրը վարողին ներկայացված՝ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ընտրության դիմումի հիման վրա:

Հարց 104.

Ինչպե՞ս կարող է մասնակիցը տեղեկատվություն ստանալ իր կուտակած միջոցների մասին:

Մասնակիցը կենսաթոշակային հաշվում կուտակված միջոցների մասին տեղեկատվություն կարող է ստանալ հետևյալ հաշվետվությունների միջոցով.

1. կենսաթոշակային հաշվի քաղվածքի,
2. կենսաթոշակային հաշվով կատարված գործառնությունների մասին տեղեկանքի,
3. կենսաթոշակային հաշվի վերաբերյալ նախորդ տարվա տարեկան հաշվետվության,
4. բանկոմատների միջոցով՝ հաշվով կատարված վերջին 10 գործարքների վերաբերյալ:

Մասնակիցը կարող է ստանալ քաղվածքը և տեղեկանքը՝ այցելելով հաշվի օպերատորին կամ մուտք գործելով «Իմ հաշիվը» համակարգ՝ www.epension.am ինտերնետային էջի միջոցով:

Մասնակիցը ստանում է տարեկան հաշվետվությունն իր նախընտրությամբ՝ էլեկտրոնային կամ թղթային եղանակով:

Հարց 105.

Անձը հնարավորություն ունի՞ տեղեկություններ ստանալ իր վճարած եկամտային հարկի և սոցիալական վճարի մասին:

Այո: Հարկային մարմինը վարելու է աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով ձևակերպված աշխատողների և նրանց գործատուների, ինչպես նաև ինքնազբաղվածների, անհատ ձեռնարկատերերի ու նոտարների կատարած սոցիալական վճարի և եկամտային հարկի անձնավորված հաշվառում: Յուրաքանչյուր աշխատողի, անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի և ինքնազբաղվածի համար հարկային մարմնում բացված է անհատական հաշիվ, որը հիմնված է անձի հանրային ծառայության համարանիշի վրա: Անձի անհատական հաշվում գրանցվում է, թե որքա՞ն է կազմել տվյալ անձի բազային եկամուտը (աշխատավարձը և քաղաքացիաիրավական պայմանագրերից ստացվող այլ եկամուտները) հաշվետու ժամանակահատվածում (վարձու աշխատողի համար՝ յուրա-

քանչյուր ամիս, անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի և ինքնագբաղվածի համար յուրաքանչյուր տարի), ինչքա՞ն են կազմել եկամտային հարկի և սոցիալական վճարի գումարները և որքա՞ն կուտակային վճար է կատարվել: Անձնավորված հաշվառման համակարգում ամփոփված տվյալները հասանելի են անհատական հաշվի իրավատիրոջ համար: Նա իր վերաբերյալ տեղեկատվությանը կարող է ծանոթանալ համացանցի օգնությամբ, մուտք գործելով՝ անձնավորված հաշվառման համակարգի իր էջը նույնականացման քարտի և քարտ կարդացող սարքի միջոցով, կամ կարող է իր անհատական հաշվի գրավոր քաղվածքը պահանջել հարկային մարմնի տարածքային ստորաբաժանումից: Անհատական հաշվի քաղվածքը տարին մեկ անգամ անձին կտրամադրվի անվճար, իսկ նույն տարվա ընթացքում երկրորդ և ավելի անգամ գրավոր տեղեկատվության տրամադրումն անձի համար կլինի վճարովի:

Այլ գործատուի մոտ աշխատանքի փոխադրվելու (գործատուի փոփոխության) դեպքում, աշխատողի կողմից եկամտային հարկ և սոցիալական վճար կատարելու (հարկային գործակալի) պարտականությունը կատարելու է նոր գործատուն: Այդ աշխատողի համար հարկային մարմնում անհատական նոր հաշիվ չի բացվում, այլ ստացված տեղեկատվությունը մուտքագրվում է աշխատողի արդեն իսկ բացված անհատական հաշվին:

Մասնակիցը սոցիալական վճարների մասին տեղեկությունները կարող է ստանալ կենսաթոշակային հաշվի նախորդ տարվա տարեկան հաշվետվության և կենսաթոշակային հաշվով կատարված գործառնությունների տեղեկանքի միջոցով: Սույն հաշվետվությունների միջոցով, մասնակիցը կարող է տեսնել իր և պետության կողմից կատարված սոցիալական վճարների մասին տեղեկությունները ցանկացած ժամանակահատվածի համար:

Չափ 106.

Անձի անհատական կենսաթոշակային հաշվի տեղեկությունները կարո՞ղ են արդյոք հասանելի լինել որևէ այլ անձի:

Անձի անհատական կենսաթոշակային հաշվի տեղեկությունները գաղտնի են և հասանելի չեն այլ անձանց, ներառյալ՝ նրա ընտանիքի անդամների:

Գործատուն, կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը չեն կարող տեղեկանալ անձի կենսաթոշակային հաշվի տվյալներին՝ անձի կատարած ֆոնդի ընտրության, անձին պատկանող պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի փայերի քանակի և արժեքի մասին:

Մասնակիցների ռեեստր վարողը, հաշվի օպերատորը, հարկային մարմինը, որոնց հայտնի են անձի անհատական կենսաթոշակային հաշվի տեղեկությունները, պարտավոր են պահպանել կենսաթոշակային գաղտնիքը և որևէ կերպ չհրապարակել կամ հայտնի չդարձնել այլ անձանց:

Որոշակի հիմքերի առկայության դեպքում կարող են լինել բացառություններ վերը նշված սկզբունքից: Մասնավորապես՝ քրեական հետապնդում իրականացնող մարմնի կամ դատարանի որոշման հիման վրա, գործատուն, պետական մարմինները և այլ սուբյեկտները պարտավոր են տեղեկություններ տրամադրել անձի կենսաթոշակային հաշվի վերաբերյալ:

Մեկ բացառություն ևս. ժառանգության իրավունքը հիմնավորող փաստաթղթերի առկայության դեպքում, անձի անհատական կենսաթոշակային հաշվի տեղեկությունները կարող են տրամադրվել նաև մահացած մասնակցի ժառանգներին:

Ֆորմ 107.

Ու՞ր կարող է դիմել անձը սոցիալական վճարների, անհատական հաշվի, ինչպես նաև կենսաթոշակային հաշվի և անուկիտետի հետ կապված բողոք կամ հարցում ունենալու դեպքում:

Սոցիալական վճարների և անհատական հաշվի հետ կապված բողոք կամ հարցում ունենալու դեպքում անձը կարող է դիմել հարկային մարմին, որը բողոքը կամ հարցումը քննում է 30 օրվա ընթացքում և դիմումատուին գրավոր հայտնում իր որոշման մասին, նշելով՝ որոշման ընդունման համար հիմք հանդիսացած հիմնավորումները և իրավական հիմքերը: Եթե հարցումը կամ բողոքը դուրս է հարկային մարմնի իրավասություններից, ապա հարկային մարմինը բողոքը կամ հարցումը՝ 3 օրվա ընթացքում, ուղղում է իրավասու մարմնին:

Անհատական կենսաթոշակային հաշվի հետ կապված բողոք կամ հարցում ունենալու դեպքում, անձը կարող է դիմել հարկային մարմնին կամ մասնակիցների ռեեստրը վարողին:

Հարց 108.

Մասնակիցն արդյոք կարո՞ղ է տեսնել, թե իր կենսաթոշակային ֆոնդի միջոցները ի՞նչ բաշխվածությամբ և որտե՞ղ են ներդրվել:

Համաձայն ՀՀ օրենսդրության, կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը հրապարակելու է իր բոլոր ֆոնդերի կառուցվածքը, որտեղ ներկայացված են լինելու ընդհանուր տեղեկություններ ֆոնդի ներդրումների վերաբերյալ, մասնավորապես բացահայտվելու է ֆոնդի ներդրումները Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում ըստ ֆինանսական գործիքների, ոլորտային եւ ռեգիոնալ բաշխվածության:

ԿԱՄԱՎՈՐ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Չարդ 109.

Ուլքե՞ր կարող են մասնակցել կամավոր կենսաթոշակային բաղադրիչին:

Կամավոր կենսաթոշակային բաղադրիչի մասնակից կարող է լինել ցանկացած անձ՝ անկախ տարիքից և անկախ այն հանգամանքից, որ նա պարտադիր կուտակային և բաշխողական կենսաթոշակային բաղադրիչի մասնակից է, թե ոչ:

Կամավոր կենսաթոշակային բաղադրիչն, ընդունված է անվանել կենսաթոշակային համակարգի 3-րդ բաղադրիչ: Կատարելով կամավոր կուտակային վճարներ, անձը ձեռք է բերում լրացուցիչ կենսաթոշակ ստանալու իրավունք: Անձի օգտին կամավոր կուտակային վճար կարող են կատարել նաև գործատուները՝ այդ նպատակով միանալով կամավոր կենսաթոշակային բաղադրիչի որևէ կենսաթոշակային սխեմայի: Կամավոր կուտակային վճարի չափը կսահմանվի կողմերի՝ կամավոր կուտակային վճար կատարողի և կամավոր կուտակային սխեմա առաջարկող ֆինանսական կազմակերպության, փոխադարձ համաձայնությամբ:

Չարդ 110.

Ի՞նչ է կամավոր կուտակային կենսաթոշակային սխեման և ու՞մ պետք է դիմել այն ձեռք բերելու համար:

Կամավոր կուտակային կենսաթոշակային սխեման, ըստ էության, պայմանագիր է մի կողմից՝ անձի (իր կամ այլ անձի օգտին) կամ գործատուի (իր աշխատողի) և մյուս կողմից՝ կամավոր կուտակային կենսաթոշակային ծառայություններ մատուցողի միջև, որոշակի պայմաններով կամավոր կուտակային վճարումներ կատարելու, կամավոր կենսաթոշակ կուտակելու և վճարելու վերաբերյալ: Կամավոր կենսաթոշակային ծառայություններ կարող են մատուցել ապահովագրական ընկերությունները, բանկերը և կամավոր կենսաթոշակային ֆոնդերը: Ապահովագրական ընկերությունները կարող են առաջարկել միայն «սահմանված կենսաթոշակներ» սխեմաներ, բանկերը՝ «կուտակային կենսաթոշակային

ավանդներ», իսկ կամավոր կենսաթոշակային ֆոնդերը՝ «սահմանված կենսաթոշակային վճարներ» սխեմաներ:

Չարդ 111.

Անձն արդյոք կօգտվի՞ հարկային արտոնություններից, եթե մասնակցի կամավոր կենսաթոշակային բաղադրիչին:

Կամավոր կենսաթոշակային բաղադրիչին մասնակցելու դեպքում, անձն օգտվում է եկամտային հարկի արտոնություններից: Մասնավորապես, անձի եկամտային հարկով հարկման ենթակա եկամուտը նվազեցվում է մինչև 5 տոկոսի չափով: Օրինակ, եթե անձի ամսական բազային եկամուտը կազմել է 100 000 դրամ և նա կատարել է 5000 դրամ կամավոր կուտակային վճար, ապա նրա եկամտային հարկը կհաշվարկվի 95 000 դրամից:

Իսկ գործատուներն իրավունք ունեն նվազեցում կատարել շահութահարկի բազայից, եթե կամավոր կուտակային վճարներ կատարեն իրենց աշխատողների օգտին: Գործատուի հարկվող շահույթը որոշելիս, համախառն եկամուտը նվազեցվում է գործատուի յուրաքանչյուր վարձու աշխատողի համար գործատուի կատարած կամավոր կուտակային կենսաթոշակային վճարումների 50 տոկոսի չափով, բայց ոչ ավելի քան տվյալ վարձու աշխատողի աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների 2,5 տոկոսի չափով:

Գործատուն շահութահարկ չի վճարի վարձու աշխատողի օգտին կատարված կամավոր կուտակային վճարների՝ տվյալ վարձու աշխատողի աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների, 7.5 տոկոսը չգերազանցող մասի համար:

Չարդ 112.

Կարո՞ղ է արդյոք կամավոր կենսաթոշակային բաղադրիչի մասնակիցն՝ իր ցանկությանը, դուրս գալ կամավոր կենսաթոշակային բաղադրիչից:

Նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը, մասնակիցն իրավունք ունի ցանկացած ժամանակ ներկայացնելու իր կուտակած միջոցները (նվազեցված ապահովագրության պայմանագրի կնքման և կատարման ծախսերը) միանվագ վճարելու պահանջ, եթե տվյալ մասնակցի կողմից համապատասխան կենսաթոշակային ֆոնդին, բանկին կամ

ապահովագրական ընկերությանն առաջին կուտակային վճարի կատարման, ավանդի ներդրման կամ ապահովագրավճարի վճարման օրվանից անցել է առնվազն երկու տարի: Բացառություն է կազմում այն դեպքը, երբ կամավոր կենսաթոշակային սխեման ձեռք է բերել գործատուն:

Այս դեպքում, հարկը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափով.

- եթե կուտակած միջոցները կազմում են մինչև 120000 դրամ` 24.4 տոկոս,
- եթե կուտակած միջոցները կազմում են 120 000-2 000 000 դրամ` 29280 դրամին գումարած 120 000 դրամը գերազանցող գումարի 26 տոկոս,
- եթե կուտակած միջոցները կազմում են 2 000 000 դրամից ավելի` 518080 դրամին գումարած 2 000 000 դրամը գերազանցող գումարի 36 տոկոսը:

Հարց 113.

Կամավոր կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչը կարո՞ղ է արդյոք զբաղվել կուտակային կենսաթոշակային ֆոնդերի կառավարմամբ:

Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը` «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքի համաձայն, կենսաթոշակային ֆոնդի կառավարման իրավունք ունեցող իրավաբանական անձ է:

Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների պետական գրանցումն ու լիցենզավորումն իրականացնում է Կենտրոնական բանկը` «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Նշված օրենքով կենսաթոշակային ֆոնդերի նկատմամբ սահմանվում են որոշակի պահանջներ և սահմանափակումներ:

Կուտակային կենսաթոշակային ֆոնդերի և կամավոր կուտակային կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչներին ներկայացվող պահանջներն ու սահմանափակումները տարբեր են: Այդ իսկ պատճառով կամավոր կենսաթոշակային ֆոնդերի կառավարման լիցենզիա ունեցող կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը չի կարող զբաղվել կուտակային կենսաթոշակային ֆոնդերի կառավարմամբ:

Կուտակային կենսաթոշակային հատկացումների պարտադիր դրույքաչափը սահմանված է բազային աշխատավարձի 10%: 10%-ից

ավելի կուտակել ցանկացողները դա կարող են անել կամավոր կուտակային կենսաթոշակային ֆոնդերի, ապահովագրական ընկերությունների կամ բանկերի միջոցով, համաձայն՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի հոդվածներ 62, 63 և 64-ի:

Հարց 114.

Քաղաքացիների համար իրազեկման և տեղեկատվական ի՞նչ աղբյուրներ կան նոր համակարգում ծիշտ և գիտակցված որոշումներ կայացնելու համար:

Կենսաթոշակային նոր համակարգի վերաբերյալ քաղաքացիները հավաստի տեղեկատվություն կարող են ստանալ կենսաթոշակային բարեփոխումների գործընթացում ընդգրկված լիազոր կառույցների կամ 114 թեժ գիծ ծառայության միջոցով:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Հասցե՝ ք. Երեւան 375010, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 3,
Ջեռ.՝ 010 52 68 31
Կայք՝ www.mlsa.am
Էլ. փոստ՝ info@mlsa.am

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հասցե՝ Երեւան 375010, Մելիք-Ադամյան փող. 1
Ջեռ.՝ 060 700 304
Կայք՝ www.minfin.am
Էլ. փոստ՝ press@minfin.am

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային մարմին

Հասցե՝ Երևան 375015, Մ.Խորենացու 3
Թեժ գիծ՝ 060 54 44 44
Կայք՝ www.taxservice.am
Էլ. փոստ՝ pek@customs.am, pek@taxservice.am

ՀՀ Կենտրոնական բանկ

Հասցե՝ Երևան 0010, Վ.Սարգսյան 6

Հեռ.՝ 010 592 697, 010 592 698

Կայք՝ www.cba.am

Էլ. փոստ՝ consumerinfo@cba.am

ՀՀ ԱՍՐՆ սոցիալական ապահովության պետական ծառայություն

Հասցե՝ Երևան, 0010, Նալբանդյան 13

Հեռ.՝ 010 51 14 14

Կայք՝ www.ssss.am

Էլ. փոստ՝ info@sif.am

«Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն» հիմնադրամ

Հասցե՝ Երևան 0069, Կարապետ Ուլենեցի 68

Հեռ.՝ 060 50 87 00

Կայք՝ www.epension.am

www.esocial.am

Էլ. փոստ՝ epension@epension.am

ԻՄԱՑԻՐ ԱՎԵԼԻՆ

Ֆինանսներ բոլորի համար՝

www.abcfinance.am

Կենսաթոշակային բարեփոխումների ֆեյսբուքյան էջ՝

<https://www.facebook.com/ArmeniaPensions>

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԹԵԺ ԳԻԾ՝ 114

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

www.114gov.am

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

www.114gov.am



www.ePension.am
www.114gov.am



Այս հրատարակությունը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝
ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով:
Բովանդակությունը միմիայն հեղինակներինն է և պարտադիր չէ,
որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները: